



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Գ.ԱՐԵՎՈՒԹՅԵՒ

ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ

Ա. Բ.



1999

17. Januar 1893 Riegenfelschen  
Grafen


## ԳՐԻԳՈՐ ԱՐՁՐՈՒԵԼ

ST 2415

# ԵՎԵԼԻՆԱ

## ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՏԻՒԴ

(ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ԱՆՏԻՊ ԶԵՐԱԳՐԻՑ)



Թի Ի Փ Լ ի Ս  
ՏՊԱՐԱՆ „ԱՐՈՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ  
Բարեկառի հակայու փող. տեղին:

1891

Дозв. Ценз. Тифлисъ, 2 октября 1891 года  
Тип. Апроръ Т. Я. Назарьянъ Барятинская улица



28. 254

4280-60



Գարունը սկսվել էր և տարվայ այդ եղանակի հետ միասին սկսվել էին շոքերը՝ Նիցցայում։ Միջերկրական ծովի Corniche ասված ամբողջ եզերքը, Նիցցայից սկսած գրեթէ մինչև Ջենովա քաղաքը որքան գեղեցիկ է ձմեռ ժամանակ, այնքան էլ անտանելի շոք և նոյն իսկ անտողի կիմա ունի գարնան և ամառ ժամանակ։ Իժիշխների խորհրդով պէտք է փախչէի Նիցցայից։ Քաղաքը թողնելուց առաջ ես ուզեցի հանել տալ լուսանկարս, որպէս զի իմ կենդանագիրս ուզարկեմ Կ. Պօլիս, ծնողներիս, նրանց ցոյց տալու համար թէ առողջացել եմ։ Բայց երբ ստացայ լուսանկարս, զարմացած մնացի.... Միթէ ես այդ աստիճան չաղացել էի... Ես աչքերիս չէի հաւատում.... Ուրեմն ես կատարելապէս առողջ եմ, մտածեցի ես, ուրեմն և կարող եմ այստեղ, արտասահմանում, շարունակել և աւարտել համարսարանական ուսումն:

Այժմ համոզվելով թէ կատարելապէս առողջ եմ,  
և վճռելով դարձեալ մի երկու շաբաթ՝ մնալ Նից-  
ցայում, ես սկսեցի յաճախել թատրօն, կօնցէրտներ,  
վերջապէս բնակարանիս այգիում հանդիպելով նոյն  
տան կենողներին, երկու շվեդացի երիտասարդնե-

րին, ինքս մօտեցալ նրանց, ծանօթութիւն կապեցի նրանց հետ, բացատրելով նրանց թէ հիւանդութիւնս էր պատճառը, որ եօթ ամիս շարունակ մի և նոյն ժան մէջ կենալով, ես խուսափում էի որ և է ծանօթութիւն կապելուց: Մենք շատ շուտով բարեկամացանք և երիտասարդները սիրով յանձն առան այդ երկու շաբաթվայ ընթացքում ընկերակից լինել ինձ թէ թատրոնի և թէ կոնցերտների այցելութիւններում: Բժիշկը խորհուրդ էր տուել ինձ երկու շաբաթից լետոյ գնալ Շվեյցարիա և այնտեղ անցկացնել ամառը: Ես վճռել էի գնալ Ցիւրիխ, որտեղ կարող էի համալսարանական դասախոսութիւններին էլ հետևել: Որքան էր ուրախութիւնս երբ իմացայ թէ իմ նոր բարեկամներս էլ ուղիղ երկու շաբաթից լետոյ նմանապէս Շվեյցարիա են ուղևորվում: Շվեդացի բարեկամներիցս մէկը, Կ., հետեւալ օրն արդէն տարաւ ինձ իր քրոջ տունը. տիկինը մի Փրանսիացի յալտնի նկարչի, պլ. Գինն էր:

Դ-ի տունը մի ճակատագրական ներդործութիւն պիտի ունենար իմ ամբողջ կեանքիս վրա. այդտեղ ամեն օր հաւաքվում էին ամեն ազգութիւններին պատկանող գեղարուեստագէտներ՝ նկարիչներ և երաժիշտներ, այդտեղ ես ծանօթացայ Փրանսիացի նկարիչ Մ-ի հետ, ուստ նկարիչ-բանաստեղծ Խւմասօվի հետ, այդտեղ ես առաջին անգամ հանդիպեցի օրիորդ Էվլինա Պ-ին, որին ինձ ներկայացրին և

տանտիկնոջ եղբայր, շվեդացի բարեկամս Կ., ովը չէր սիրում առիթ բաց թողնել մի հանաք անելու համար, օրիորդի ձեռքից բոնելով, աւելացրեց. «դուք տեսնում էք ձեր առջև Փրանսիական երաժշտական աշխարհի ապագայ պայծառ աստղերից մինին:»

Էվլինա գեղեցկուհի էր այդ բառի բուն նշանուկութեամբ. դէմքի շատ նուրբ գծագրութիւնների ու երեսի մորթի սպիտակ գոյնի հետ, նա իր սկ յօնքերի տակ ունէր Միջերկրական ծովի ջրի պէս կապոյտ արտայախիչ աչքեր, շքեղ շագանակագոյն մազեր, փոքր ինչ հաստ, բայց հրապուրիչ շրթունքներ, դրա հետ միասին և վերին աստիճանի շնորհալի կազմուածք ու քայլուածք.... Նրա դէմքի գծագրութիւնը փոքր ինչ հրէական էր.... Առաջին անգամ ես միջոց չունեցայ խօսել նրա հետ. կարծեմ նա ինձ վրա ուշագրութիւն էլ չը դարձրեց. նա եկել էր յայտնելու Դ. ամուսիններին թէ միւս օրը լինելու է իր կօնցերտը «Cercle Massena». ասլած ժողովարանի դահլիճում:

Երբ նա սկսեց խօսել, ականջիս գիպաւ վերին աստիճանի մեղմ, ներդաշնակ ձախի հնչիւնը:

Միւս օրը մենք բոլորս կօնցերտումն էինք: Ժողովարանի ահագին և շքեղ դահլիճը լի էր ամեն տեսակ ազգութիւններին պատկանող հասարակութեամբ: Դահլիճում բառի բուն նշանակութեամբ ասեղ զցելու տեղ չը կար: Էվլինա Պ. ածում էր

Մէնդէլսօնի, Շումանի, Վագնէրի, Շոպէնի պիեսաները, ածում էր սօլո և օրկէստրի գաշնակցութեամբ: Վերջին տեսակի պիեսաները նա անգիր չէր ածում, այլ նօտաներով. այն ժամանակ ամբողջ Նիցցայում յալտնի ռուս գեղեցիկ իշխանուհի Ս. բարձրանում էր բեմը, նստում էր օրիորդի կողքին և գարձնում էր նօտաների երեսները....

Ես առաջին անգամ էի լսում օրիորդի ածելը. նա ածում էր սքանչելի կերպով. մատների տէխնիկան աննման էր, փոքրիկ ձեռքերի ոլժը աներևակայիլ էր.... Դա կանացի ածելը չէր, այլ տղամարդու ածելն էր: Ֆրանսիացիք նապօլէօն III-ի ժամանակ նոր էին ծանօթանում Վագնէրի երաժշտութեան հետ. Լիստի փոխադրած Վագնէրի երաժշտութիւնը օրիորդն աննման կերպով կատարեց, բայց Շոպէնի պիեսաները նա կատարեց թոյլ և անկենդան կերպով:

Հետեւալ առաւօտը Նիցցայի «Phare du Littoral» լրագիրը տպում էր մի վերին աստիճանի գովասանական, նոյն իսկ ոգեսրված քննութիւն օրիորդի ածելու մասին, բայց աւելացնում էր. «Զենք կարող չը նկատել, որ Շոպէնի պիեսաները շնորհալի արտիստուհին ածում է թոյլ և անկենդան կերպով, սակայն դա հասկանալի է. Շոպէնին ըմբռնելու և նրա գրուածներն արտայտելու համար հարկաւոր է կենքի աւելի մեծ փորձառութիւն ունենալ և աւելի հասակով լինել, իսկ տաղանդաւոր պիանիս-

տուհին, որքան մեզ յայտնի է, հազիւ քսան և երկու տարեկան կը լինի: Շոպէնին ըմբռնելու և նրան արտայալտելու համար՝ հարկաւոր է սիրել և տանջվել:

Նիցցա թողնելու օրը հասաւ: Ես իմ նոր բարեկամներիս խօսք էի տուել նրանց ճանապարհորդակից լինելու: Գնացքի դուրս գալու ժամին հաւաքվել էինք բոլորս քաղաքի հոյակապ երկաթուղարին կալարանում: Մեր փոքրիկ շրջանը վեց հոգուց էր բաղկացած: Դ. ամուսիններ, տիկին Դ-ի եղբայր շվեդացի Կ., նրա բարեկամ Տ., օրիորդ Էվէլինա և ես: Մենք բռնեցինք մի ամբողջ կուպէ վագոնի մէջ: Խնձ վիճակվեց նստել ուղղակի օրիորդի դիմաց.... Ես ասստիկ լաւ տրամադրված էի, շատ էի խօսում և զգում էի թէ վատ չէի խօսում: Եւ խօսում էի գլխաւորապէս օրիորդի հետ: Ես նկատեցի որ մեր բարեկամները մեզ վրա նայելով՝ ժպտում, իրար մէջ մեր մասին հանաքներ, նկատողութիւններ էին անում.... Երեխ իմ գեղեցիկ խօսակցի վրա նայելով իմ աչքերս չափից դուրս արտայալիչ էին դարձել, երեխ նշմարելի էր լինում իմ հայեացքի մէջ հիացում, զմայլում, և այդ երեխ նկատեց սրամիտ Կ. բարեկամս. նա յանկարծ տեղից վեր թռաւ, ձեռքի մի արագ շարժուածքով վերցրեց օրիորդի ծնկների վրա դրված փոքրիկ, նուրբ, թեթև սպիտակ շալը, և ինձ համար բոլորովին անսպասելի

կերպով, այդ շալով ծածկեց գլուխս և երեսս ամբողջապէս....

— Ե՞հ, ինչ էք անում, ասեցի ես ծիծաղելով ու շալից ազատվելով:

— Մեծ ծառայութիւն եմ մատուցանում ձեզ, երիտասարդ բարեկամս. գլխաբաց նստելով համ գլուխդ կը ցաւի արեգակի ճառագալթներից, համ էլ ափսոս չեն ձեր աչքերը, որոնք կարող են կուրանալ այդ տեսակ լարված հայեացքներից....

Այդ խօսքերին անզուսպ և ուրախ ծիծաղ հետեւ մեր կուպէում: Սաստիկ ծիծաղում էր և օրիորդը, բայց ես նկատեցի, որ մի թեթև կարմրութիւն ծածկեց նրա սովորաբար գունատ դէմքը:

Լիօն քաղաքը հասնելուն պէս, մենք պէտք է բաժանվէինք Եվէլինա Պից: Մեր ամբողջ հասարակութիւնը գնում էր Շվեյցարիա, իսկ օրիորդն ուղերժում էր Պարիզ և Լօնդօն, այդ երկու մայրաքաղաքներում ամառ ժամանակ կօնցէրտնէր տալու համար:

Պարիզի գնացքն ուղերժում էր անմիջապէս, իսկ մեր գնացքը, որը պիտի ուղերժվէր Շվեյցարիա, գեռ ևս քսան րօպէից յետոյ պիտի շարժվէր: Այդպիսով մենք ժամանակ ունէինք ճանապարհ գցել օրիորդին: Նա շտապեց մտնել իր վագոնը և մենք հերթով մօտենում էինք վագոնի պատուհանին և նրա ձեռքը սեղմելով, հրաժարական էինք

առնում նրանից: Երբ հերթն ինձ հասաւ և ես մօտեցայ վագոնի պատուհանին, Եվէլինա մեկնեց ինձ իր ձեռքը՝ հրաշալի ժպիտը շրթունքներին և խորին տիրութիւն աչքերում.... Նրա հայեացքը թափանցեց սիրոս: Զը գիտեմ ինչ էր արտայալտում նոյն րօպէին իմ հայեացքը, բայց ինձ թվում էր թէ ես գուշակել էի նրա հոգեկան տրամադրութիւնը.... Մենակ, միշտ մենակ, առանց սրտակից բարեկամի, առանց կեանքի ընկերոջ, ապրուստ վաստակելու համար միշտ թափառական կեանք վարելու ստիպված, մի բուն, մի սիրուն, համեստ, կօկիկ, մշտական բուն չունենալով, որի մթնոլորդն իսկ շնչէր սիրոյ և քնքոյշ անդորրութեան զգացմունքով,—ահա վիճակս....

Ինձ թվում էր թէ ծովալին ջրի գոյնը և ծովի խորութիւնն ունեցող այդ գոյգ հրաշալի աչքերը՝ ուղիղ այդ հոգեկան տրամադրութիւնն էին արտայալտում այն րօպէիս.... Իսկ ինքն.... հասկացաւ արգեօք իմ հայեացքն էլ հասկացաւ արգեօք թէ ես հասկացել էի իրան....

Անցան ամիսներ: Ես ուսանող էի գրվել Ցիւրիխի համալսարանում և մեծ աշխատասիրութեամբ և եռանդով էի պարապում: Նոր երկիր, նոր հասարակական սարմաններ, նոր շրջան և նոր մարդիկ—այդ բոլորը սաստիկ գրաւում էր ինձ: Ես չէի մոռացել Եվէլինային. նրա դէմքի հրաշալի

գծագրութիւնները, նրա կապուտ աչքերը միշտ կենդանի էին մնում իմ լիշտութեանս մէջ, բայց ես արդէն սկսում էի հաւատալ, որ նրա հետ հանդիպելը մի անցողական, պատահական դիսլուած էր, որը ոչինչ հետեւանք չի ունենալ իմ կեանքիս համար, ոչինչ ներգործութիւն չի ունենալ իմ վիճակիս վրա: Ես կատարելապէս առողջացած էի զգում ինձ և պարապում էի մեծ եռանդով. ուսանողական գործունեալ կեանքը կլանել էր ինձ իր մէջ ամբողջապէս: Ալդուել գրաւում էր ինձ և մի նոր երեսով, նոր ոչ թէ միայն ինձ համար, բայց և ամբողջ Եւրօպայի համար.... Ուզիղ այդ ժամանակ երեացին Յիւրիխի համալսարանում երկու ոռու կանալք, Եւրօպայի համալսարանների առաջին ուսանողուհիներ, կանանց բարձրագոյն կրթութեան մարմնացած կարապետներ.... Ես շտապեցի ծանօթանալ նրանց հետ և այն օրից յափշտակվեցալ հասարակական նոր իդէալներով: Ալդ երկու կանանց շուրջը խմբում էինք մենք, այլ և այլ ազգութիւններին պատկանող ուսանողներս, նրանք, այդ կանալք էին, որոնք կազմում էին ուսանողների այդ բոլոր տարբեր խումբեր իրար մէջ կապող օղակը...  
Առաւոտները ես լսում էի դասախոսութիւնները համալսարանում, ճաշից յետով պարապում էի մասնագիտութեանս, քաղաքանտեսութեան վերաբերեալ ընթերցանութեամբ, իսկ երեկոյեանները փորձում էի իմ թոյլ ոլժերու հայրենիքիս, Կ. Պօլսի

Հայոց լրագիրներին թղթակցութիւններ գրելում.... Գրուածներս սկսում էին աւելի և աւելի լաճախ երեալ Կ. Պօլսի պարբերական մամուլի էջերում: Ես ուզում էի գրել, միշտ գրել, անընդհատ կերպով գրել, —բայց մի մի անգամ ուղեղիս գործողութիւնը կարծես կանգ էր տանում, եօ չէի գտնում յարմար նիւժ, ինձ պակաս էին մտքեր....

Սեպտեմբեր ամիսն էր: Տաք և պարզ երեկոյ էր: Ես նստած էի իմ փոքրիկ, անշուք, բայց սիրուն և մաքուը ուսանողական սենեակումս և գիրք էի կարգում: Դրանը բախեցին. մտաւ շվեյցարուհի աղախինը և դրեց առջևս մի փոքրիկ ծրար:

— Ումնիցն է դա:

— Զը գիտեմ, պարոն, Zürcher Hof հիւրանոցի ծառան է բերել:

Ծրարի հասցէն ճիշդ որ իմ անունով էր. դա անկասկած կանացի, թէև ինձ բոլորովին անձանօթ ձեռագիր էր՝ նուրբ, պարզ և գեղեցիկ ձեռագիր....

— Խնդրեցէք ծտուալին, որ սպասէ, անմիջապէս պատասխան կը տամ, դիմեցի ես աղախնուն:

Ծրարը բանալուն պէս ուզեցի կարդալ նամակը, բայց երկու հանգամանքներ ըօպէապէս արգելը, բայց երկու հանգամանքներ ըօպէապէս արգելը, իսկ երեկոյեանները փորձում թղթի վրա և թուղթը անուշահոտ էր...

Բաց վարդագոյն և անուշահոտ թուղթ, — որքան բան են ասում քասան և երեք տարեկան երիտասարդի վառ երևակալութեան...

Բնական շարժուածք էր երիտասարդի կողմից դեռ նամակը չը կարդացած՝ հոտ քաշել անուշահոտ թղթից... Նամակը գրված էր Փրանսերէն լեզուով, անպահով, հասարակ, բայց գեղեցիկ ոճով։ Ահա մօտաւորապէս նրա բովանդակութիւնը։

„Յարդելի պարոն. գուցէ դուք մոռացել էք արդէն այն աղջկան, որի հետ պատահմամբ ծանօթացել էիք նիցցալում, և որին ճանապարհորդակից եղաք մինչև Լիօն քաղաքի կայարանը։ Այժմ ես եկալ այստեղ աշնան երկու ամիսներն անցնելու և հանգստանալու իմ սովորական ծանր գրազմունքներից. սակայն երկիրը և քաղաքը ինձ համար կատարելապէս օտար են. բացի ձեզանից ես ոչ մի ծանօթ չունեմ այս քաղաքում։ Գուցէ կը համաձայնվէիք նուիրել ինձ ձեր ժանդագին ժամանակի մի երկու ժամեր՝ իմ առաջնորդ լինելու այս քաղաքում, որպէս զի ձեր օգնութեամբ ես կարողանաի մի փոքրիկ բնակարան գտնել, ժամանակաւորապէս սարքել և պիտի ճարել։ Ես իշել եմ «Zürcher Hof» հիւրանոցում և երջանիկ կը լինէի ձեզ տեսնելու, երբ ժամանակը ձեզ կը ներէ գալ ինձ մօտ։ Ընդունեցէք կանխապէս իմ սրտագին շնորհակալութիւններս։ Ձեր էվէլինա Պ.՝”։

Նամակը կարդալուց յետով, չը գիտեմ ինչու,

մի արտասովոր յուզմունք էր տիրել սրտիս... Նա, այդ խեղճ սիրտը, կարծես մի արտակարդ անցքի էր սպասում, կարծես գուշակում էր, թէ կեանքիս մէջ դեռ չեղած մի արկած պիտի պատահէր... Ես անընդունակ էի գրում ինձ գրել մի որ և է պատասխան, ես որ շատ սիրում էի բարեկամներիս նամակներ գրել և վատ չէի գրում Փրանսերէն լեզուով։

Դէպի կօրիգօրը տանող սենեակի դուռը բանալով, ես ասեցի Հիւրանոցի ծառալին, որ գնայ, նամակի պատասխան չի լինի, ես ինքս անմիջապէս կը դամ օրիորդի մօտ։

Ուրեմն ինձ վիճակված է նրան նորից տեսնելու, մտածեցի ես....

Մի քանի օրից յետոյ ինձ աջողվեց գտնել օրիորդի համար երեք սենեակներից բաղկացած փաքրիկ և գեղեցիկ մի բնակարան, ես օգնեցի նրան սարքվել, ճարեցի մի պիտինո նրա համար։ Բնակարանը գտնվում էր Ցիւրիխի ամենագեղեցիկ արուարձաններից մինում։ Բնակարանի պատուհաններից բացվում էր հրաշալի տեսարան. տունը գտնվում էր մի կանաչազարդ բլուրի վրա, որի ստորոտում սիռված էր բուսականութեան մէջ թաղված ամբողջ քաղաքը, իսկ քաղաքի այն կողմը, հեռաւորութեան մէջ, երևում էր գրեթէ ամբողջ Ցիւրիխեան ծովակը....

Եվէլինա ինձ հետ էր շըջում քաղաքում բնակարան որոնելու ժամանակ:

— Ես կը տիսրեմ մենակ հիւրանոցի սենեակում, ասեց նա իր սովորական գեղեցիկ ժպիտով, դուք թողլ կը տաք, որ ձեզ հետ ընկերանամ.... Այդպիսով համ ձեր հասարակութիւնը կը վարելեմ, համ էլ կը ծանօթանամ քաղաքի գիրքի հետ.

Երբ նա անցաւ իր նոր բնակարանը և ես հրաժարական էի առնում նրանից, նա խնդրեց ինձ աղատ ժամանակ այցելել իրան։ Առաւօտները նա ածում էր, սերտում էր իր պիեսաները, ես էլ զբաղված էի պրօֆէսորների դասախոսութիւնները լսելով։ Ես կարողանում էի մի մի անդամ ժանել նրա մօտ երեկոները միայն։ Պատահում էր, որ ես նրան համոզում էի միասին մի զբոսանք անելու։

Աւելի մօտիկ ծանօթանալով Եվէլինայի հետ, ես իմացաւ, որ նա դաւանութեամբ բողոքական էր և ինչպէս բոլոր բազոքական Փրանսիացիք, օրիորդըն էլ ջոկվում էր միւս Փրանսիուհիների մեծ մասից՝ իր բազմակողմանի զարգացմամբ։ Բողոքական Փրանսիացիք տարբերվում են կաթոլիկ Փրանսիացիներից գլխաւորապէս այն ուսումնասէր, լայն և հարցասէր ոգով, որը չէ բաւականանում միմիայն բուն Փրանսիական քաղաքակրթութեամբ, այլ նրանք ջանում են ընդարձակել իրանց մտաւոր աշխարհի հօրիզոնը՝ ծանօթանալով և օտար ազգերի լեզուների, գրականութեան և նրանց քաղաքակր-

թութեան արգասիքների հետ։ Եվէլինա բացի Փըրանսսերէնից, կատարելապէս տիրապետում էր անդլիւրէն և գերմաններէն լեզուներին, ծանօթ էր այդ երկու ազգերի գրականութեան հետ, բացի երաժիշտ լինելուց, նա փոքր ինչ նկարիչ էլ էր, նա միացնում էր իր մէջ Փրանսիուհու հաճելի, դուրեկան բնաւորութիւնը՝ գերմանուհու լուրջ բարքու վարքի հետ։ Նա անխոնջ աշխատասէր էր՝ անդլիուհու պէս։

Բաւական չէ որ նա իր անձն էր պահում իր աշխատանքով, բայց և իր ձեռք բերած վաստակի մի մասը ուղարկում էր Փրանսիայի գաւառական փոքրիկ քաղաքներից մինում ապրող իր ձերունի, անդամալոյն հօրը, որը բաղդաւորապէս ըստիշ զաւակներ չունէր, թէև դեռ իր առողջ ժամանակ ալրի մնալով, երկրորդ անգամ էր պսակվել.... Այդպիսով Եվէլինա ստիպված էր իր սուդնիթական միջոցներով ոչ թէ միայն իր հօրը պահել, բայց և իր խորթ մօրը։

Մի քանի շաբաթվայ ծանօթութիւնը մտերմական, ընկերական յարաբերութիւններ հաստափեց իմ և Եվէլինայի մէջ։ Ես զգում էի թէ սիրում եմ նրան, — բայց մեծ խնամքով աշխատում էի ծածկել նրանից իմ այդ զգացմունքը։ Ես գուշակում էի թէ նա էլ սիրում է ինձ, թէև երբէք ամենաթեթև խոստովանութիւն, ամենատաննշան

ակնարկութիւնն անգամ այդ տեսակ զգացմունքի մասին չէին արտասանել նրա շրթունքները....

Ս.լդ ժամանակամիջոցում իմ սովորական պարապունքներից ազատ ժամերում ես պարապում էի Պրուդօնի բազմահատոր հեղինակութիւնների ուսումնասիրութեամբ։ Մի քանի օր ես չէի տեսել Եվելինալին և համալսարանական առաւօտեան ըգբարդունքներից լետոյ, ես իմ երեկոներն անց էի կացնում Պրուդօնի գրուածները մի տեսակ ագահութեամբ կարդալում։ Ես հասել էի այն ընդարձակ գըլին, որի մէջ Փրանսիացի հեղինակը բացարում է Ս.ստուծու գաղափարի մասին իր թէօրիան։ Ես կարդում էի այդ գլուխը և զարմացած էի մնում, որ ոչինչ չէի հասկանում, չէի ըմբռնում հեղինակի միտքը.... Կարդում էի նոյն գլուխը սկզբից մինչև վերջը հինգ անգամ, տասն անգամ, —և գարձեալ ուղեղս հրաժարվում էր հեղինակի միտքն ըմբռնելուց....

Ես ծալեցի գերքը, գժգոհ ինձանից, արհամարհելով ինձ մինչև անգամ, և դէպի իմ անձն ու իմ մտաւոր կարողութիւններն ունեցած այդ արհամարհական զգացմունքի տակ ձնշված՝ ես հագնվեցալ և գնացի օրիորդի մօտ, որին մի քանի օր է չէի սեսել։

Նրա մօտ մտնելուն պէս, նկատեցի նրա դէմքի արտալայտութիւնից թէ առանձին ուրախութիւն եմ սլատճեռել նրան իմ երևալով։

—Այդպէս են մոռանում, միթէ, բարեկամներին, ասեց նա ուրախ ժպտալով և ձեռքս պինդ սեղմելով....

—Հաւատացնում եմ ձեզ, օրիորդ, որ սաստիկ էի զբաղված այս օրերս....

—Զբաղված, կամ մի որ և է բանով վշտացած, աւելացըց նա ուշադրութեամբ դիտելով դէմքս.

—Այն, և վշտացած.... Ես ինձանից շատ գժգոհ եմ, օրիորդ. ես մի նշանաւոր ժամանակակից հեղինակի, Պրուդօնի գրուածքն եմ կարդում և չեմ հասկանում կարդացածը։ Ես սկսում եմ շատ աննպաստ կարծիք ստանալ իմ մտաւոր կարողութիւնների մասին, ես սկսում եմ արհամարհել ինձ....

—Allons donc, ինչ երեխալութիւն է դա ձեր կողմից... Այսօր չէք հասկացել, —վաղը կը հասկանաք... Իսկ ես, սիրելի բարեկամ, ընդհակառակն շատ զոհ եմ ինձանից, ես այդ բոլոր օրերը, երբ գուք չը բարեհաճեցաք բաղդաւորացնել ինձ ձեր այցելութեամբ, աւելացըց նա հեգնական ձայնով, հիմնաւորապէս և անգիր ուսումնասիրեցի Լիստի փոխադրած Վագնէրի „Լոէնգրին“ օպէրալից «Marche nuptiale» հրաշալի կտորը... Դուք սիրում էք երաժշտութիւն, այնպէս չէ...»

—Պաշտում եմ, օրիորդ.

—Ուրեմն նստեցէք ալստեղ, դիվանի վրա, որ-

պէս զի կարողանաք ինձ վրա նայել. միայն հանգիստ նստեցէք, ձայն մի հանէք... Բայց ծխել կարող էք, ինչքան ուզենաք:

Եւ նա սկսեց ածել: Ես նայեցի նրա դէմքի վրա. նրա գեղեցիկ դէմքը մի վայրկեանում կերպարանափոխվեց. այդ ուրախ, զուարթ օրինորդական դէմքը միանգամից, առաջին վեցըրած ակրօդից արգէն, ստացաւ լուրջ, սառն, խոր մտածմունքների և ծանր հսկսերի մէջ խորասուզված կնոջ պատկերը: Ես աւելի կասեմ. դա կնոջ դէմք չէր, այլ մի գեղեցիկ, մարմարեալ արձան, որին ճարտարքանդագործը տուել էր խորին մտածմունքների մէջ խորասուզված մի գեղեցիկ կնոջ արտայատութիւն... Նա ածելու ժամանակ, կարծես մտնում էր մի սուրբ տաճար և իր ամբողջ էութեամբ ներշնչվում էր այդ սրբութեան զգացմունքով... Նա ածելու ժամանակ՝ սրբագործում էր: Նատ և շատ տարիներից յետոյ ես ճանաչում էի մի բժիշկ, որը դէմքով շատ տգեղ էր,—բայց երբ այդ մարդը մտենում էր հիւանդի անկողնուն, նրա դէմքը կերպարանափոխվում էր, կարծես լուսաւորվում էր մի արտասովոր լուսով. և այդ տգեղ դէմքը կատարելապէս գեղեցիկ էր դառնում... Նա էլ այդ րօպէին ներշնչվում էր իր բարձր կոչման սրբութեամբ և այդ զգացմունքն էր, որը գիւթական կերպով կարողանում էր նոյն իսկ տգեղ դէմքը կատարելապէս գեղեցկացնել:

Եվէլինա ածում էր այդ երեկոյ արտասովոր արտայալտութեամբ, մի և նոյն ժամանակ և հրսկացի ուժով... Ես լսում էի և նայում էի,—և թէ նրա գեղեցիկ դէմքից, թէ նրա ածելուց կատարելապէս զմայլված, ժամանակ առ ժամանակ զգում էի թէ ինչպէս իմ ամբողջ մարմնովս անցնում էր մի տարօրինակ սարսուռ, երկիւղ, ահ ու դող... Ես այնուհետև իմ ամբողջ կեանքումս երբէք չեմ լսել ոչ ոքից Վագնէրի լիշեալ պիկսալի այդքան հրաշալի կատարումն... Եւ զարմանալի զուգագիպութիւն. կնոջ փոքրիկ ձեռքերի տակ Վագնէրի երաժշտութեան վեհ, հզօր գաղափարները ինձ հետզհետէ և ակամայից ստիպում էին մտածել Պրուդօնի իմ այն օրվայ կարդացած և ըլ հասկացած աստուածալին թէօրիալի մասին... Յանկարծ ինձ թվաց թէ ըսկում եմ ըմբռնել Պրուդօնի միտքը, ժամանակաւորապէս թմրութեան մէջ եղած ուղեղս կարծես սկսում է հասկանալ այն, ինչ որ մի քանի ժամ առաջ անպայման հրաժարվում էր ըմբռնելուց... Այս, ես շարունակում էի համ ագահութեամբ լսել Վագնէրի երաժշտութեան աստուածալին հնչիւնները, համ յամառութեամբ մտածել Պրուդօնի աստուածալին թէօրիալի իմաստի մասին, և երբ Եվէլինալի հրաշագործ ձեռքերի տակ հնչեց վերջին հզօր ակօրդը՝ ես կարծեցի որ կը գժվեմ և բարձրաձայն ուզեցի աղաղակել. „Հասկացայ, ըմբռնեցի, Եվէլինա, իմ Եվէլինա, քեզ եմ պարտական,..“

Սակայն ես չաղաղակեցի, այլ անշարժ, լուռ, մի տեսակ աստուածապաշտական զգացմունքի մէջ ընկղմված, սառած ու պապանձված մնացի.... Սիրտս սաստիկ բաբախում էր, ամբողջ մարմինս սառել էր, ես զգում էի թէ սաստիկ զունատվել եմ.... Յուղ-մունքիս չափ ու սահման չը կար....

Իսկ Եվէլինա իր վերջին ակօրդը վերցնելուն պէս, արագ շարժուածքով վեր էր կացել աթոռից, ծածկել էր պիտինօի խուփը և անշարժ կանգնել էր պիտինօի մօտ: Մի ձեռքով պիտինօի վրա լենված, իր առաջվայ ժպիտը երեսին, նա մի տեսակ ինքնաբաւականութեամբ ինձ վրա էր ուղել իր գեղեցիկ կապոյտ աչքերի հայեացքը: Ինձ թվաց թէ նրա շնորհալի կազմուածքը ծածկող երկար շլեյփով՝ ճա-տինէի, բաց կապոյտ գոյնը՝ ուրիշ՝ բան չէր, եթէ ոչ նրա կապոյտ աչքերի արտափայլումն, ինձ թվաց թէ նրա աչքերի մոլոր կապոյտ լուսը՝ բաց կապոյտ գոյնով էր լուսաւորել նրա ամբողջ զգեստը.... Նա հրաշալի էր այդ դիրքի մէջ:

Ես այլ ևս չը կարողացայ տիրապետել ինձ. վեր թռայ տեղիցս, արագ քայլերով մօտեցայ նրան, իմ երկու ձեռքերով բռնեցի նրա երկու փոքրիկ ձեռքերը և հերթով սկսեցի համբուրել նրանց.... Դա առաջին համբուրն էր, որ ես դրոշմում էի նրա ձեռքերի վրա...

— Ասեցէք խնդրեմ, այդ ի՞նչ էք անում, ասեց նա փոքր ինչ նեղացած.

— Ի՞նչ... Անմիջապէս կը բացատրեմ ձեզ. այդ հրաշագործ երկու փոքրիկ ձեռքերի նուագելուն եմ պարտական, որ մի կէս ժամում ես հասկացայ այն, ինչ որ ժամերով չէի կարող ըմբռնել. ձեր ձեռքե-րով կատարած Վագնէրի երաժշտութեանն եմ պար-տական, որ թմրած ուղեղս արթնացաւ, լուսաւոր-վեց մի նոր և ինձ համար անսովոր մտաւոր լու-սով....

— Իսկ զուք գիտէք, բարեկամ, ընդմէջեց նա ինձ, ուղիղ աչքերիս մէջ նայելով և մեղմ կերպով լետ քաշելով իր ձեռքերը իմ ձեռքերիցս, գիտէք որ մի քանի ժամանակից ես էլ սկսեցի աւելի լաւ հասկանալ նօպէնի երաժշտութիւնը և աւելի լաւ արտայալտել նրան....

— Ի՞նչ ժամանակից, ասեցէք Եվէլինա, ի՞նչ ժամանակից...

— Այն ժամանակից... երբ ես սկսեցի... ոկրել և տանջիկել, արտասանեց նա հազիւ լսելի ձայ-նով....

Սիրտս անզուսալ կերպով սկսեց բաբախել, ես խօսք չէի գտնում պատասխանելու....

— Կարծեմ որ նիցցայի լրագրի երաժշտական պարոն ըէցէնզինտը կարող է այժմ գոհ լինել ինձանից, աւելացրեց նա խորամանկ ձեռով:

Երկուսս էլ չը կարողացանք զսպել մեր բարձր ծիծաղը: Երջանկութեան զագաթնակէտին հասան խօսքերը պակասում էին մեզ երկուսիս: Օրվայ տը-

պաւորութիւնները չափից դուրս խիստ էին և անսպասելի, երկուսս էլ զգում էինք թէ չափից դուրս յուզված ենք, որպէս զի կարողանալինք այդ նոյն երեկոյ շարունակել հանդիստ, բարեկամական խօսակցութիւնը:

Երջանիկ ժպիտը երեսներին, իրար ձեռքը պինդ սեղմելով, կարողացանք միայն արտառանել.

—Յը տեսութիւն էվէլինա.

—Բարի գիշեր, անգին բարեկամ:

—

Ես շտապով վերցրի զլխարկս և փախայ էվէլինալի. բնակարանից... Այո՛, փախայ: Ես չէի գնում, այլ վազում, փախչում էի: Ես շտապում էի տուն, որպէս զի մենակ լինեմ, մենակ զգամ, մենակ վայելեմ իմ անսահման երջանկութիւնս...

Ես խուսափում էի գազի լապտերներով լուսաւորված փողոցներում անցուգարձ անող մարդկանց հայեացքներից... Ես ուզում էի մենակութեան մէջ ծածկել երջանկութիւնս: Ինձ թվում էր թէ գէմքըս ոգեսորութեան առանձին արտայատութիւն, երջանկութեան արտասովոր փայլ էր կրում, որը պիտի մատնէր ինձ, պիտի մատնէր իմ ներքին աշխարհի անսահման յուզմունքը...

Տուն հաւնելուն պէս, ես շտապով վառեցի ճըրտքը և ինչպէս մի սիրահարված երիտասարդ գոզալով բաց է անում իր սիրուհու նամակը, նոյն տենդալին անհամբեր զգացմունքով բաց արի ես

սեղանի վրա դրված Պրուդօնի գիրքը: Արդեօք րոպէական ոգեսորութեան և սիրոյ զգացմունքի աղդեցութեան տակ ծագած անձնախաբէութիւն էլ դա, —թէ ճշմարիտ՝ կնոջ ձեռքերով կատարված Վագնէրի երաժշտութիւնը կարողացաւ բացատրել ինձ Փրանսիացի հեղինակի խոր փիլիսօփայական, ինձ համար մինչեւ այդ րօպէն մուժ մնացած մըտքերը...

Ես ագահութեամբ սկսեցի կարդալ նոյն գլուխը, որը մի քանի ժամ առաջ տասն անգամ ծալրից ծայր կարդալով՝ չէի հասկացել... Եւ իրաւ, այս անգամ կարդացի և հասկացայ:

Հիացմանս չափ չը կար...

Սակայն ուշ էր. ես ծալեցի գիրքը, սաստիկ լոգնած իմ ալդչափ յուզմունքներից: Հանելով զգեստներս և պառկելով անկողնիս մէջ, ես շարունակում էի կրկնել. Ի՞նչ զարմանալի զուգագիպութիւն... Պրուդօն և Վագնէր... Շօպէն և սէր: Երաժշտութիւնը սիրոյ զգացմունքի ներգործութեան տակ բացատրում է փիլիսօփայական միտքը, ուրիշ կողմից սիրոյ խոր և անկեղծ զգացմունքը բացատրում է երաժշտական հեղինակի մտքերի իմաստը, ըմբռնել է տալիս նրա մաքուր ոգեսորութիւնը... Պրուդօն, Վագնէր, Շօպէն, երաժշտութիւն, փիլիսօփայութիւն և մարդկալին սէր, —իրարից տարբեր, իրար հակառակ հոգեկան ոյժերի ինչ զարմանալի փախադարձ ներգործութիւն....

Այնուհետեւ, մի ամիս շարունակ, ես ամեն օր էի տեսնվում Եվելինալի հետ։ Ամեն երեկոյ ես գնում էի նրա մօտ և մենք կամ դուրս էինք զալիս զբունելու, երբ եղանակը լաւ էր, գնում էինք կամ ոտով մօտակալ գիւղերից մէկը, կամ շոգենաւով էինք պտտում Ցիւրիխեան ծովակի վրա։ Կամ եթէ եղանակն աննպաստ էր, ես մնում էի Եվելինալի մօտ և ամբողջ երեկոյ մենք անց էինք կացնում միասին։ Նա ածում էր պիանօի վրա, այնուհետեւ մենք միասին կարդում էինք և խօսում ու վիճում էինք կարդացածի մասին... Պատահում էր որ մենք երազում էինք ապագալի մասին, մեր երեւակարութեան մէջ ստեղծելով այն ապագալ կեանքը, որը միասին պիտի վայելէինք ծննդավալում... Այդ երջանիկ երեկոներից մէկումն էր, որ նա խոստովանվեց ինձ որ եթէ եկել էր արձակուրդներին Ցիւրիխ, իր համար մի բոլորպին անծանօթ քաղաք, — այդ այն պատճառով էր, որ նա ոչ Պարիզում, ոչ Լօնդոնում չը կարողացաւ մոռանալ երիտասարդի համակրութեամբ լի հայեցքը Լիոնի կայարանում... .

Սակայն ժամանակ առ ժամանակ նկատվում էր Եվելինալի ակնարկութիւններից, որ նա թէե սիրում, պաշտում էր երաժշտութիւնը, բայց յոդնել է արտիստուհու և դասատուի աստանդական կեանքից... Ես երբէք չեմ մոռանալ մի դէպք, որը շատ պերճախօս կերպով համոզեց ինձ նրա հակում-

ների մասին դէպի երջանիկ, խաղաղ ընտանեկան կեանքը և նրա այժմեան արտիստական կեանքից յոդնած լինելու մասին։

Ես բարձր ձայնով կարդում էի Պելլտանի „La mère“ սրտաշարժ գրուածքը. Եվելինա լսում էր մեծ ուշագրութեամբ... Յանկարծ ես նկատեցի, որ նա իր թաշկինակը դէպի աչքերն է տանում... Ես նայեցի նրա վրա. Նրա հարաշալի կապոյտ աչքերը լի էին արտասուքով...

— Եվելինա, այդ Բնչ է պատահել ձեզ, հարցրի ես...

— Ո՞րքան երջանիկ է նա, հեղինակի նկարագրված այդ մարդը, եղաւ պատասխանը:

Մեր երջանիկ երեկոներին շուտով աւելացաւ և մի նոր զբաղմունք, որն անասելի բաւականութիւն էր պատճառում ինձ։ Մի օր մտնելով Եվելինալի մօտ, ես հաղորդեցի նրան իմ վերաբերմամբ մի ուրախալի լուր. Ա. Պօլսի այն լրագրի խմբագիրը, որի աշխատակից էի ես, տեղեկացնում էր ինձ, որ իմ յօդուածները սկսում են հետզհետէ զրաւել իրանց մտքերի նորութեամբ հասարակութեան ուշադրութիւնն ու նրա համակրանքը։

Գիտէք, Եվելինա, ես ձեզ ճանաչելուց առաջ էլ էի զրում, բայց իմ յօդուածները թոյլ, անգոյն էին, աղքատ էին մտքերով, ձեր սէրը մի նոր ոյժ տուեց իմ գաղափարներին, նոր կեանք ներշնչեց

իմ մէջ, և ալժմ ես ձեզ եմ պարտական, որ գըիչս դարձել է աւելի բեղմնաւոր, մաքերիս պաշարը աւելի հարուստ... Այսուհետեւ իմ կոչումը որոշված է. ձեր սիրոյ ներգործութեան տակ ես վերջնականապէս հասկացաւ թէ իմ կոչումն է՝ լինել հրապարակագրող. և ներշնչվելով ձեզնով, պիտանի լինել իմ ազգին՝ ահա իմ ամենաջերմ տենչանքս...

— Բարեկամ, ես ուզում եմ, ես պէտք է սովորեմ հայերէն, յանկարծ վրա բերեց Եվէլինա, ես պէտք է սովորեմ ձեր լեզուն, որպէս զի կարողանամ կարդալ ձեր յօդուածները։ Մի մերժէք ինձ այս շնորհը. պարապեցէք ինձ հետ ձեր մարդենի լեզուով։

Եւ այն օրից մեր երեկոները ինձ համար աւելի էլ թանգագին դարձան. ես սկսեցի պարապել Եվէլինայի հետ հայերէն լեզուով և քանի գնում աւելի և աւելի էլ զմայլում նրա արտակարգ ընդունակութիւնների վրա. կարճ ժամանակում նա բաւական մեծ առաջադիմութիւն էր արել հայերէն լեզուի ուսումնասիրութեան մէջ։

Սակայն արձակուրդների ժամանակը վերջանում էր. Եվէլինա պէտք է շուտով ուզեկորպէր նիցցա, որտեղ արդէն սկսվում էր ձմեռվայ սեզօնը։ Ամեն ձմեռ նա սովորաբար նիցցայումն էր անցկացնում, պարապելով դասաւութեամբ և կօնցէրտներ տալով. իսկ ես դեռ ևս մի երկու, երեք տարի պիտի մնայի կամ Ցիւրիխի, կամ գերմանական մի այլ համալսարանում։

Հասաւ վերջապէս բաժանվելու րօպէն։ Երկաթուղարին կայարանի պլատֆորմի վրա կանգնած, տխուր սրտով սեղմում էինք իրար ձեռքերը, խոստանալով փոխադարձ անընդհատ նամակագրութամբ պահպանել մեր սէրը։

— Իսկ միւս տարի, ձմեռվայ արձակուրդներին, ես գոնէ մի ամսով կը դամ նիցցա, ձեզ տեսնելու համար, Եվէլինա, ասեցի ես...

Նրա դէմքն անմիջապէս ընդունեց ուրախ և զուարթ արտայալութիւն։

— Ա՛խ, որքան երջանիկ կը լինեմ ես, բացականչեց նա ուրախացած, միթէ դու ճշմարիտ կը դաս նիցցա...

«Դու...» առաջին անգամն էր, որ նրա հրապուրիչ շրթունքներն արտասանում էին դու քաղցը խօսքը։

Ես ակամայ տարայ ձեռքս դէպի սիրտս. նա սաստիկ էր բարեխում... Ա՛խ, Բնչի, մտածեցի ես, աւելի վաղ վայելել ըստուցիր ինձ քո շըթունքներով արտասանած „դու“ դիւժական բառը...

Յուզված սրտով սեղմեցի նրա ձեռքը և յուզված ձայնով աւելացրի. „Իսկ երկու տարուց լետոյ, երբ ուսումնասիրութեամբ, ես քոնը կը լինեմ մինչեւ գերեզման։“

Հինգ բօպէից լետոյ գնացքը հեռանում էր ար-

գէն, հետզհետէ հեռացնելով ինձանից և Եվէլինացին:

Մի ամբողջ տարի անցաւ. ես պարապում էի ամենամեծ եռանդով, իսկ իմ սէրը դէպի Եվէլինա միշտ վառ էր պահպանվում իմ նրա հետ ունեցած անընդհատ նամակագրութեամբ։ Օր չէր անցնում, որ ես նրանից նամակ չը ստանալի, օր չէր անցնում, որ ես ինքս նրան նամակ չը գրէի...

Սակայն տարվայ վերջը, երբ ես արդէն պատրաստվում էի օգտվել ձմեռվայ արձակուրդներից և գոյնէ մի ամսով հեռանալով սովորական զբաղմունքներից, այդ ամիսը Եվէլինայի հետ, Նիցցայում անցնելու, — նրա նամակները յանկարծ սկսեցին հազարիւտ դառնալ:

Հազար ու մի երթագրութիւններ երկար շարքով փոփոխապէս յալտնվում և անհետանում էին ուղեղիս մէջ... Ես անդադար հարցնում էի նրան իմ նամակներում նրա նամակների հազւագիւտ դառնալու պատճառի մասին, բայց միշտ մի և նոյն պատասխանն էի ստանում, որը ինձ թվում էր ոչ անկեղծ և խուսափող. „Ո՞րքան մեղաւոր եմ ես ձեր առջև, տնզին բարեկամ, որ այժմ ստիպված եմ ուշ ուշ գրել ձեզ, սակայն դուք անշուշտ ներող կը լինէք, նկատի առնելով իմ անընդհատ ըդքաղմունքները. այժմ դասերս աւելացան, ես անդադար հրաւիրվում եմ թէ ալստեղ, թէ Մարաէ-

լում և թէ Մօնակօի կազինօսում տրվող մեծ կօնցըրտներին մասնակցելու, ալստեղ էլ, մասնաւոր տներում, և նոյն իսկ իմ բնակարանումս, յաճախ են տեղի ունենում երաժշտական առաւօտներ և երեկոներ, որոնց չը մասնակցել ինձ անհնարին է յինում։“

Հոգիս անհանգիստ էր. չը գիտեմ ինչի սիրոս հրաժարվում էր այդ խօսքերին հաւատալուց... Ես աւելի էլ շտապում էի շուտով ճանապարհ ընկնելու. մի անբացատրելի և չարագուշակ նախագգացմունք տանջում էր սիրոս և հասցնում էր ուղեղս մի տեսակ հիւանդուտ դրութեան... Արդեօք նա ինձ այլ ես չէ սիրում առաջվալ պէս, գուցէ նա սկսել է ուրիշին սիրել... Խանդոտութեան խուլ զգացմունքը դէպի մի անլաւտ ախոյեան սկսում էր աիրել սրտիս... Բայց ոչ, դա անկարելի է, նա սուտ չի խօսի... միթէ ես չը գիտեմ, որ այդ աղջիկը, որից աւելի թանգ բան չը կալ ինձ համար աշխարհիս երեսին, դատապարտված է անընդհատ աշխատանքի, մինչեւ որ ես ինքս անկախ մարդ դառնալով, կը մեկնեմ նրան իմ ձեռքը և կասեմ. „Հիմա հերթը իմն է, հիմա ես կաշխատեմ, իսկ դու կը վայելս անդորր կեանք և քո միակ զբաղմունքը կը լինի ինձ ողեղորել դէպի իմ սիրած գործունէութիւնը...“

Նիցցա հասնելուն պէս, ես նոյն երեկոյ արդէն

այցելեցի Եվկլինալին։ Գունատ, ամբողջ մարմնով դողալով, սրտատրով զգացմունքով տարայ ես ձեռքը դէպի նրա բնակարանի դրանկ զանգակը...

Եվկլինա իմ աչքում աւելի էլ գեղեցկացել էր։ Նա ընդունեց ինձ անսահման ուրախութեամբ, սակայն նրա վարմունքի մէջ նկատելի էին գործունեալ մարդու ձևեր... Նա երկար ժանանակ չէր նստում մի և նոյն բազկաթոռի վրա, ամեն ըօպէ մտնում էր միւս սենեակը, ներողութիւն էր խընդրում, որ շատ զբաղված է և կէս ժամից յետով պէտք է տանից դուրս գալ. վարվում էր ինձ հետ մասամբ ինչպէս մի երեխալի հետ,—առաջարկում էր ինձ քաղցրեղէններ, պատուիրում էր ինձ համար թէլ կամ կակաօ, ամեն ըօպէ զնում էր խոհանոց, խոհարարուհուն պատուէրներ տալու համար, ամեն ըօպէ նայում էր ծոցի ժամացուցի վրա...

—Ս.ստուած կը սիրէք, Եվկլինա, ասենք թէ դուք այստեղ զբաղված մարդ էք, իսկ ես, ընդհական, արձակուրդներս վայելող մի ազատ ուսանող,—բայց գոնէ այդ կէս ժամը, որ կարող էք ինձ շնորհել, հանդիսա նստեցէք ձեր բազկաթոռի մէջ և ինձ վայելել տուեցէք ձեր ընկերութիւնը... Ինձ ոչ ձեր քաղցրեղէնները, ոչ ձեր թէլն ու կակաօն են հետաքրքրում,—ինձ հարկաւոր է ձեզ տեսնել, ձեզ վրա նայել, ձեզ հետ խօսել, ձեր ձախը լսել, ձեզանով զմալլվել...

—Բարեկամ, դուք կարծում էք որ մենք դեռ Ցիւրիխումն ենք... Այստեղ ես դժբաղդապէս շատ զբաղված մարդ եմ...

—Ոչ, ես չեմ մոռանում որ Ցիւրիխում չեմ և բնական եմ գտնում, որ այստեղ ձեզ մասամբ կերպարանափոխված եմ տեսնում... բայց...

—Բայց ի՞նչ...

—Ոչի՞նչ...

—Vous me boudez ? Ուրեմն լաւ, եկէք վաղ առաւօտ, 11 ժամին, անպատճառ եկէք... Վաղը ես ունեմ երաժշտական առաւօտ ինձ մօտ, այս մեծ սենեակում... Դուք կը հանդիպէք այստեղ մեր նշանաւոր երաժիշտներից շատերին, մի քանի նկարիչներին էլ... A propos, գիտէք մեր բարեկամ Իւմասօվն էլ այստեղ է, նա մի քանի օրով եկել է Մէնտոնալից, նա էլ կը լինի ինձ մօտ:

—Ս.յ՛, կը գտմ, բայց կը գտմ միայն ձեզ տեսնելու և ձեր ածելը լսելու համար, մասամբ էլ իմ բարեկամ Իւմասօվին հանդիպելու համար, իսկ ուրիշները, ձեր ծանօթները, հաւատացէք, ինձ ամենեին չեն հետաքրքրում...

Նա կրկին նայեց ժամացուցի վրա:

—Ներեցէք բարեկամ, վերջացրեց նա վերկենալով, ես դաս ունեմ. ուզում էք, միասին դուրս գանք. դուք ինձ ճանապարհ կը գցէք, այնպէս չէ...

Ես չը հաւանեցի այն խառնիճաղանձ արտիս-

տական հասարակութիւնը, որը հետեւեալ առաւօտը հաւաքվել էր Եվէլինալի բնակարանում։ Ես ուրախ էի Եվէլինալի ածելը նորից լսելու, երջանիկ էի նրա վրա նայելով, անչափ ուրախ էի նմանապէս իմ հին բարեկամ Իւմասօվին հանդիպելու....

Մենք զրկվեցանք և համբուրգեցանք Իւմասօվի հետ, որպէս վաղեմի բարեկամներ։ Ես առանձին պատկառանք էի զգում դէպի ալդ մարդը. նա ինձանից ասսն տարով մեծ էր. նրա գեղեցիկ և խելացի դէմքը, նրա ներդաշնակ ձայնը. որը կարծես սրտի խորքից էր բզ՛սում, նրա անսահման բարեսրտութիւնը, նրա տարօրինակ, սրտաշարժ, փոքր ինչ պեսիմիստ փիլիսօփալական հայեացքը կեանքի վրա, վերջապէս նրա փորձառութիւնը կեանքի մէջ, —այդ բոլորն իմ սրտում մեծ հաւատ էր ներշնչում դէպի այդ մարդը։

Կարծես ես զգում էի որ նրան, այն էլ մօտիկ ապագայում, վիճակված այստի լինէր վճռողական ներդործութիւն ունենալ իմ ամբողջ էութեան, իմ կեանքիս ամբողջ ապագայի վրա....

Մնացած ամբողջ հասարակութիւնից, ես միայն ակամայ ուշագրութիւնս էի դարձրել մի գեղեցիկ, բարձրահասակ, մօտ երեսուն տարեկան երիտասարդի վրա։ Այո, ակամայ եմ ասում, որովհետեւ բոլոր ներկալ գտնվողներից, նա ամենից մտերիմն էր երեսում Եվէլինալի հետ, կամ գուցէ աշխատում էր ուրիշների աչքում մտերիմ ձեւանալ գեղեցկուհի

տանտիկնոջ հետ... Այդ մարդը ճշմարիտ աչքի էր ընկնում իր գեղեցկութեամբ, սակայն այդ գեղեցկութիւնը մի ինչ որ անբացարելի յետ մղող բնաւորութիւն էր կրում.... Նրա երկար, սաթի պէս սև մազերը, երկար, նմանապէս սև միրուքը, որոնք շրջանակի պէս ամփոփում էին նրա գունատ դէմքը, շատ էին սազում նրա բարձր, յաղթանդամ կազմուածքին։ Բայց նրա ինքնահաւան ժպիտը, որը կարծես ընդմիշտ դրօշմված էր նրա շրթունքների վրա, այնպիսի տպաւորութիւն էր գործում, որ իբր թէ այդ մարդը դէպի իր բոլոր նմանները մի անսահման արհամարհանքով էր վերաբերվում։

Երաժշտութիւնը սկսվել էր. ես հարցը իմ մի անձանօթ հարեւանից ով է այդ գեղեցիկ, բարձրահասակ մարդը։

—Իս մեր յալտնի նկարիչներից մէկն է, Ժիւլ Անդոլի, ծագումով սպանիացի, եղաւ պատախանը։

Ես յալտնեցի շնորհակալութիւնս իմ անձանօթ հարեւանին, և շարունակեցի ուսումնասիրել սպանիացուն։ Հէնց որ երաժշտութիւնը ընդմիջվում էր, Անդոլի իր գանդաղ և ինքնահաւան քալուածքով անմիջապէս մօտենում էր Եվէլինալին և սկըսում էր խօսել նրա հետ։ Նրա շարժուածքներից, նրա անդադար գլուխ տալուց, նրա ինքնահաւան ժպիտներից երեսում էր, որ սպանիացին բարեհաճում էր շնորհաւորել պիանիստուհուն իր ունեցած

աջողութեան համար: Ես աչք չեի հեռացնում եւ-  
վէլինալից. նա շարունակում էր անշարժ նստել  
պիանօի մօտ, համբերութեամբ լսում էր սպանիա-  
ցու անվերջանալի ճառախօսութիւնները, մի մի ան-  
դամ ժպտում էր, բայց հազիւ պատասխանում էր  
նրան, այլ գրեթէ ամբողջ ժամանակ նայում էր  
կամ իր առջև գրված նօտաների վրա, կամ պիանօի  
վրա, կամ կարծես ուսումնասիրում էր իր ձեռքերն  
ու մատների ծալրերը... Յանկարծ նա երեսը դարձ-  
րեց դէպի իմ կողմը. մեր հայեացքները իրար հան-  
դիպեցան...

Եվէլինա արագ շարժուածքով վերկացաւ պիա-  
նօի առջև գրված աթոռից, գլխով մի ինչ որ նը-  
շան արեց Անդոլիին և արագ քալլերով, ունկնդիբ-  
ների շարքերի միջով անցնելով, մօտեցաւ ինձ: Ան-  
դոլի հետեւց նրան: Ես անմիջապէս վերկացաւ տե-  
ղիցս:

—Թույլ տուեցէք, սիրելի բարեկամ, դիմեց նա  
ինձ, ներկայացնել ձեզ իմ նոր բարեկամին, պ. Ժիւ  
Անդոլիին...

Ապա դիմելով սպանիացուն և իր ձեռքը մը-  
տերմաբար իմ ձեռքիս վրա դնելով, աւելացրեց.

—Իսկ այդ երիտասարդը իմ հին, շատ հին  
բարեկամս է, արևելցի, բայց հոգով ֆրանսիացի,  
ամեն տեսակ արևելեան լեզուներին հմուտ, հայոց  
լրագիրների աշխատակից և ֆրանսիական լրագիր-  
ների գեղարուեստական ըէցէնդէնտ...

—Օրիորդ... այդ արդէն շատ է, վրա բերեցի  
ես...

—Enchanté, արտասանեց թանձը բարիտօնի  
հնչիւն ունեցող ձախով և իր մշտական կեղծ, ինք-  
նահաւոն ժափտով նկարիչսպանիացին:

Ես սրտումս վրդովված էի օրիորդի խօսքերից.  
Ինչ հարկաւոր էր ասել այդ մարդուն, որ ես գե-  
ղարուեստական ըէցէնդէնտ եմ ֆրանսիական լրա-  
գիրներում, երբ ամբողջ կեանքումս ես ֆրանսիա-  
կան թերթերում մի երկու անգամ եմ զրել միայն  
երաժշտական ըէցէնդիաներ, այն էլ միմիայն իրան  
օրիորդի կօնցէրտների մասին... Կամ դա ծաղը էր,  
կամ ճարապիկութիւն էր նրա կողմից...

Սակայն նրա խօսքերը, ինչպէս երկում է, շատ  
սպասաւոր տպաւորութիւն գործեցին սպանիացու  
վրա: Նա երեխ մտածում էր. «ով գիտէ. այդ մար-  
դը կարող է մի օր էլ ինձ պէտք դալ. նա գրում  
է արեւելեան լրագիրներում, գրում է և ֆրանսիա-  
կան լրագիրներում...»: Անդոլի թողտութիւն  
խնդրեց նստել իմ կողքին և երկար խօսակցութիւ-  
նից լետով, որը ընդմիջվում էր երաժշտական այլ և  
այլ կտորների կատարելով, միայն այն ժամանակ  
հեռացաւ ինձանից, երբ ձեռք բերեց իմ համա-  
ձայնութիւնս իր, ինչպէս նա ասում էր, modeste  
atelier, համեստ արհեստանոցը մի օր ալցելու....

Ինչքան էլ հակակրեմ լինէր ինձ այդ մարդը,

բայց նա, այնու ամենայնիւ, ուսումնասիրութեան արժանի անձնաւորութիւն էր երեսում ինձ և մի երկու օրից յետոյ ես շտապեցի ալցելել նրա արհեստանոցը:

Նրա բնակարանը մտնելուն պէս ես աւելի էլ համոզվեցայ, թէ այդ մարդը մարմնացած ստութիւն և կեղծաւորութիւն էր. ամեն բան հաշւած, սառն կերպով նախամտածված էր նրա մէջ.... Նոր մարդու հետ ծանօթանալով, նա իր արհեստանոցը երեխ դիտմամբ էր անուանում „տու տօդեստ ատելի“, որպէս զի նոյն մարդը մտնելով նրա ալդպէս անուանված համեստ արհեստանոցը, աւելի էլ շուարած մնար, իսկ ինքն իր մշտական ինքնահաւան ժպիտով կարողանար զմալվել մտնողի ակամայ շուարման վրա.... Այդ համեստ արհեստագործը՝ ուրիշ բան չէր, եթէ ոչ մի ամենաշքեղ, ճոխ, նոյն իսկ շուալլ բնակարան, լի ամենաթանգարին իրեղէններով.... Սակայն ամեն ինչ անձաշակ էր, ամբողջ սարք ու կարգը՝ հարուստ իրեղէններով լի վաճառանոցի էր նմանում.... Ինչ ուզում էիք անուն կարող էիք տալ այդ բնակարանին և արհեստանոցին,—բայց ոչ համեստ անունը:

Անդօլի նկարիչ էր, բայց այն նկարիչներից չէր, որոնք ի վնաս իրանց նիւթական շահերի՝ յափշտակվում են գեղարուեստի բարձր, մաքուր գաղափարներով, նկարում են միմիայն նկարելու

համար, ներշնչվում են վերացական իդէալներով, սիրում են գեղարուեստը գեղարուեստի համար,— այն նա այն ժամանակակից գործնական նկարիչներիցն էր, որոնք իրանց համար նալատակ դրած լինելով միմիայն փող վաստակելու՝ շողոքորթում են ժամանակակից հասարակութեան ճաշակին, նկարում են ոչ թէ ստեղծագործելու բարուսկան պահանջին իրաւուականութիւն տալու համար, այլ պատկերները շահաւետ գնով ծախելու համար: Այդ տեսակները չունեն ոգևորութիւն, էկստազ, նրանց պէտք չէ ներշնչում,—նրանց հարկաւոր են միմիայն առն ո զ ն ե ր: Անդօլի նկարում էր ամեն բան, բայց մի և նոյն ժամանակ այնպիսի բաներ, որոնք կարող էին անմիջապէս և ձեռնտու գներով ծախվել... Ֆրանսիայում ասլրող սպանիացի՝ նա շողոքորթում էր ֆրանսիական շօվին ի զ մ ի ն և գործենական թէ այդ զգացմունքից կարելի է օրուել սկարան էր արկածներ կամ կրիմի պատերազմից, կամ հումանիայի ազատութեան համար նապուտոն Ալբի ձեռքով մզված պատերազմից, ապա մարմարում էր Նիցցայի, Մօնակօի, Մէնտոնայի տեսարաններ՝ հարաւալին Ֆրանսիայում ճանապարհորդող անզիացի և ամերիկացի հարուստ տուրիստներին ձեռնտու գներով ծախելու համար.... Ես հաւատացած եմ, որ եթէ նա մի օր մեզ մօտ, Կ. Պօլիս գար, նա նախ և առաջ կը սկսէր նկարել կամ սուլթանի պալատի տեսարանը, կամ մեծ-վիզիրի կենդանա-

գիրը... Բացի սրանից Անդովի պարապում էր և  
քանդակագործութեամբ և ճենտապակու վրա նկար-  
չութեամբ և նոյն իսկ լուսանկարչութեամբ, որպէս  
զի հարկաւոր ժամանակ շտապով հանէ մի լուսա-  
նկար տեսարան, ներկեր քսէ նրա վրա և ձեռնտու  
գնով ծախէ մաքուր գեղարուեստը չը հասկացող  
որ և է հարատացած, խոզ ծախող ամերիկացուն:

—Comme vous voyez, cher monsieur, nous faisons un peu de tout, *աւելացրեց նա իր սովորական ժպի-մով*...

—Այս, դա շատ ձեռնտու թէօրիս է, որը երևի և գործնականութեան մէջ ձեռնտու պառագներ է տալիս, նկատեցի ես....

Նա մի վայրկեան շփոթվեց, մի սառն և գիտող հայեացք ուզգեց ինձ վրա, ապա լնդունելով իր սովորական կեղծ ժախտը, շարունակեց.

—Eh, mon Dieu, que voulez vous, ալժմեան դա-  
րը գործնական դար է.... Պէտք է իմանալ օգտվել  
նրանից:

—Կատարիելապէս համաձայն եմ ձեզ հետ, առեցի ես:

—Եւ ահա, տեսէք, cher monsieur, մինչդեռ  
իմ ընկերակիցները ամեն տեսակ զրկանքներ են  
կրում, ես այս բափէիս կարող եմ ասել, որ ոչ թէ  
միայն ապահովված եմ, բայց և հարուստ եմ: Իսկ  
հարուստ, ապահովված մարդը, քանի ու լին-  
telligence et du coeur, տեւի շատ գործ կարող է

—Այս, այս, սքանչելի մտքեր....  
Ես մի խորին զգուանք էի զգում դէպի այս  
մարդը. ես շտապեցի գուրս գալ այդ նկարիչ-լուսա-  
նկար աղանձիցու վաճառատնից, պատճառելով թէ  
նշանաւոր գործ ունեմ....

Փողոցում, ազատ օգում միայն, ես ազատ շունչ քաշեցի.... ես պատրաստ էի երեխայի պէս լաց լինել, այն աստիճան վրդովված, կատաղած էի զգում ինձ... Մարդկային պատւասիրութեան զգացմունքը ես վիրաւորված, անարգված էի համարում, յշշելով սպանիացու կեղծ-գեղարուեստագէտի ցինիական թէօրիաները....

Եւ այդ տեսակ մարդ ընդունվում է Եվկլինացի բնակարանում, նրա մտերիմ բարեկամներից է համարվում այժմ, և ով գիտէ, գուցէ արդէն ներգործութիւն է սկսել ունենալ նրա երևակայութեան վրա: Դժուար չէ ասել աշխատող, իր արհեստով հաց ճարպ, կեանքից լոգնած մի օրիոր-

գին. „Երբ դուք ապահովված, հարուստ կին կը լինէք, աւելի էլ լաւ կը կարողանաք ծառայել ձեր սիրած երաժշտութեանը, ձրի բաժանել ամբոխի մէջ այն աստուածացին, կըթիչ, բարք ու վարքը մեզմացնող երաժշտական հնչւնները, որ ծնեցնում էք ձեր հրաշալի մատներով....“

Դրանք բոլորը, ի հարկէ, ենթադրութիւններ էին, բայց, իմ կարծիքով, հաւանական ենթադրութիւններ:

Սնդօլիի բնակարանից դուրս գալով, ես անմիջապէս վերցրի մի կառք և ձիավարին պատուիրեցի տանել ինձ «Hotel de Nice» հիւրանոցը, որտեղ իջևանել էր իւմասօվ։ Ես պահանջ ունեի խօսել նրա հետ, թեթևացնել սիրտս, յայտնել նրան իմ բոլոր կասկածները, վերջապէս պահանջ ունեի խորհրդակցել իմ միակ, իմ սրտակից բարեկամի հետ...

«Hotel de Nice» գտնվում էր քաղաքի կենտրոնից բաւական հեռու, ծովի ափում և մինչև այստեղ հասնելը ես բաւական ժամանակ ունեի մտածել իմ արած ենթադրութիւնների մասին։ Այն, ճանաչելով Եվկլինալին ես հաւատացած էի որ նա չէր կարող սիրել Սնդօլիին, բայց նա կարող էր խոնարհվել այդ մարդու գործնական, անողործ թէօրիաների առջե... Եւ իրաւ, իր սեփական, այն էլ, եթէ ալսպէս կարելի է ասել, պատահական աշխատանքով՝ դասերով ու կօնցերտներով ապրող,

արտիստուհու թափառական, անապահով կեանք վարող, կեանքի անորոշ պայմաններից յոդնած մի աղջիկ՝ կարող էր, այն, յափշտակվել այնպիսի դիրքով, որը անմիջապէս տալիս էր նրան ապահովութիւն, անդորր ընտանեկան կեանք, կօնֆօրտ, կեանքի ամեն տեսակ յարմարութիւններ... Այն, ես հաւատացած էի որ Եվկլինա գարձեալ ինձ է սիրում և ոչ թէ Սնդօլիին, —բայց սրտումս չէի կարող չը խոստովանվել, որ իմ և Սնդօլիի մէջ մեծ զանազանութիւն կար. անապահով կեանքից, մշտական աշխատանքից, եթէ ալսպէս կարելի է ասել՝ բանարական կեանքից զզված անտէր ու անօգնական աղջկայ համար՝ ես ներկայացնում էի, թէև գուցէ երջանիկ, բայց անորոշ, անհաստատ ապագայ, —իսկ Սնդօլի ներկայացնում էր նրա համար, թէև սիրուց գուրկ, բայց մի որոշ, հաստատ, ապահով ներկայ... Սակայն միթէ Եվկլինա կարող էր փոքր ի շատէ երջանիկ լինել սպանիացի վաճառական-գեղարուեստագէտի հետ... Չեմ կարծում... Այդ մարդը, որը, ինչքան ես կարողացայ նկատել, ոչինչ միջոց չէր արհամարհում փող վաստակելու համար, գեղեցկուհուն իր կինը դարձնելով՝ կարող էր նոյն իսկ նրա գեղեցիկ գէմքից ու նրա մարմնի սքանչելի ձևերի գծագրութիւններից օգտվել, —իր պատկերների մէջ նրանց նկարելու ու պատկերները ձեռնտու գներով ծախելու համար... Այդ հրէշտաւոր ենթադրութիւնը, որը գուցէ ծնունդ էր իմ հե-

ւանդոտ, տանջված ուղեղի՝ սարսափ ազդեց ինձ  
վրա... —

Ես ուրախ էի, որ կառքը հասել էր հիւրանո-  
ցին... Իմ ենթագրութիւններն ու կասկածները փա-  
րատելու համար՝ ես պահանջ ունէի սփոփել սիրտս.  
Իւմասօվի սառն, լոգիական, ուշիմ, արթնացնող,  
փոքր ինչ սեսիմիստական ու հեգնական փիլիսօ-  
փալութեան միջոցով...

Ես անմիջապէս պատմեցի նրան իմ բոլոր ցա-  
ւերը, իմ ենթագրութիւններն ու կասկածները

— Պատյակ, ճրցի дорոցոյ, բացականչեց  
նախ գուք չէք կորցրել գեռ ևս ձեր սէրն ու  
ձեր սիրած առարկան. այլ գուք միայն լոկ ենթա-  
գրութիւններ էք անում ու ինքներդ լցնում ձեր  
սիրտը գառն կասկածներով, իսկ երկրորդ՝ եթէ էլ  
կորցնէիք, — ինչ վնաս...

— Ի՞նչպէս թէ ինչ վնաս, Ալէքսանդր Իվանո-  
վիչ, ես ձեզ չեմ հասկանում, սիրելի բարեկամ:

— Դուք հասարակաց զործիչ էք, այնպէս չէ,  
կամ զոնէ համոզված էք որ կոչված էք զործիչ  
գառնալու, և այժմեանից արդէն սլատրաստվում  
էք այդ կոչմանը, ձեր թող ուժերը փորձելով մա-  
մուլի էցերի մէջ... Եւ ահա այդ նոյն զործիչը,  
կամ զործիչ լինելու այդ ցանկացողը՝ խուսափում է,  
երկիւզ է կրում հոգեկան տանջանքներից, այնքան  
փոքր ոգի է, որ ուղենալով դառնալ ժողովրդի

ցաւերի ցաւակից, այդ ցաւերի բուժիչ, ժողովրդա-  
կան կեանքի առաջնորդն ու նրա ղեկավարը, — ինքն  
չէ կարողանում տանել սրտի ամենաաննշան տան-  
ջանքը...

— Բայց դա աննշան տանջանք չէ, բարեկամ,  
ես այնպէս եմ սիրում, որ եթէ այդ սէրը կորցնեմ,  
այլ ևս երկրորդ անգամ սիրել չեմ կարող. դա ինձ  
համար կեանքի և մահվան խնդիր է. կորցնելով  
այդ սէրը՝ ես պէտք է գագարեմ ապրելուց: Եթէ  
նոյն իսկ այնքան փոքրողի չեմ լինի, որ զլուխս  
սպանեմ, կարող եմ մեռնել ցաւից, դարդից, կա-  
րող եմ ցնորվել, խելագարվել...

— Սպասեցէք, սպասեցէք, բարեկամ, մի շտա-  
պէք: Ես չեմ ուրանում, որ ճշմարիտ սիրող մար-  
դու համար սիրոլ զգացմունքի կորցնելը՝ մարդկա-  
յին սրտին տուած ահազին հարուած է, սակայն  
այդ հարուածը անբուժելի չէ: Նախ, գուք գեռ  
ևս շատ երիտասարդ էք, և կարող էք նոյն ոլժով,  
նոյն զօրութեամբ սիրել և երկրորդ և երրորդ ան-  
գամ...

— Դա անհնարին է, բարեկամ, ես չեմ կա-  
րող երևակայել անգամ երկրորդ սիրոլ հնարաւորու-  
թիւնն ինձ համար...

— Յձօրի, ինքն ժամանակը ձեզ ցոյց կը տայ  
իմ խօսքերի ճշմարտութիւնը: Ես, ի հարկէ, չեմ  
ուրանում որ սէրը մի պատ ու անդան է հա-  
սրաւակաց զործիչի համար, որի վրա մարդը բարձ-

բանալով, աւելի ընդունակ, աւելի մաքուր, աւելի անձնուէր և պիտանի է դառնում... Սակայն և կորցրած սէրը, նմանապէս մի ոչ պակաս հաստատ և ամուր պատուանդան է հասարակաց գործիչի, ստեղծագործողի համար, թէ կուզ նա իր կեանքի մնացած ընթացքում երեք այլ ևս չը սիրէ մի երկրորդ անգամ: Եւ ահա ինչի. կորցնելով սէրը, մարդը տանջվելով, եփվում է այդ տանջանքների մէջ, նրա սիրտը ծանօթանում է կեանքի ամբողջ դառնութեան հետ,—և նոյն իսկ այդ տանջանքի դառնութիւնից հասարակաց գործիչը կարող է, ինչպէս կեանքի փորձառութեան առատ աղբեւրից, քաղել իր համար մի նոր ոյժ, մի նոր զօրութիւն, իր նմանների, ամբոխի ցաւերն ու նրա կեանքի դառնութիւնները ըմբռնելու համար... Դուք հօգիտէք ինչ է նշանակում գերմանական Weltschmerz բառը, այսինքն մարդկութեան ցաւերին ցաւակից լինելու ընդունակութիւնը. ինչպէս ուրեմն, կը կամենալիք դուք, երիտասարդ բարեկամ, ձեռք բերել մարդկութեան ցաւերին ցաւակից լինելու ընդունակութիւնը, երբ ինքներդ անընդունակ էք տանել ձեր սեփական տանջանքները: Առաջ սովորեցէք ինքներդ տանջվել,—ապա միայն կարող էք կոզված լինել՝ ժողովրդի ցաւերն ըմբռնելու, նրան ցաւակից լինելու, կարող էք յանդգնանալ նրա ցաւերը բուժելուն ձեռնամուխ լինել... Այս, սէրը, լինի դա նոյն իսկ կորցրած սէր, իր բոլոր դառն

տանջանքներով, հասարակաց գործիչի համար մի պատուանդան է, որի վրա բարձրանալով, նա աւելի ընդունակ է դառնում, աւելի արժանի է դառնում իր կոչման... Եւ եթէ նոյն գործիչին վիճակվի անկեղծ կերպով սիրել երկրորդ, երրորդ անգամ, այն ժամանակ այդ ամուր պատուանդանները հետզհետէ միմեանց վրա շարելով մարդը աւելի և աւելի կը բարձրանայ, նրա մարդկալին հանճարը աւելի կը մօտենալ ստեղծագործութեան կատարելութեանը...

—Որքան և սքանչելի լինէին ձեր թէօրիաները բարեկամ, բայց նրանք ամենքի համար ստեղծված չեն: Ես, օրինակ, ինձ թողլ եմ զգում այդ տեսակ ինկվիզիցիական փորձերին ենթարկել իմ այնպէս էլ վիրաւորված ու խոցված սիրտը... Ես կընկճվեմ առաջին անաջողութեան տակ:

—Այն ժամանակ գուշ հասարակաց գործիչ չէք, ստեղծագործող չէք: Ինչպէս գուշ, զրոյներդ, ձեր կրած անձնական հոգեկան տանջանքների ամբողջ դառնութիւնից պէտք է քաղեք, որպէս մի առատ և անսպառ աղբեւրից, ժողովրդի ցաւերն ըմբռնելու զօրութիւնը, այնպէս էլ մենք, գեղարուեստագէտներս, նկարիչներ ու երաժիշտներ՝ մեր անձնական հոգեկան տանջանքներից քաղում ենք բատեղծագործական հանճարի համար նոր ոյժ, նոր զօրութիւն և ներկալացնում ենք ամբոխին մեր վրձինի կամ երաժշտական հնչիւնի միջոցով մեր

Հոգեկան տանջանքը, որը համապատասխան լինելով ժողովրդի ցաւերին, նրա սրտի մէջ արձագանք գտնելով՝ մաքրում, սրբում, ափոփում է նրա սիրութ, բարձրացնում է նրա հոգին, բարոյականացնում նրա բարք ու վարքը, բարձրացնում է ամբոխի մտաւոր և բարոյական մակերևոյթը, բարձրացնում է մարդուն իր սեփական աչքերում...

— Ս.յդ բոլորը լաւ է, Սլէքսանդր Իվանօվիչ, բայց ինչպէս անել առաջին հարուածը տանելու, առաջին րօպէն չը խելագարվելու, կամ փոքրոգի չը գառնալու համար... Ասենք թէ ժամանակը ամեն ցաւերի բուժիչ է, — բայց առաջին, անսպասելի և սարսափելի րօպէն, երբ մարդը մի անգամից կորցրել է իր սիրոյ ամենախանգագին առարկան, երբ նա յանկարծ և անսպասելի կերպով իրան կանգնած է տեսնում իր սիրոյ դի ակի, իր սիրոյ դագ ազի առջե... Այն ժամանակ ինչ անել...

— Ս.յդ ուրիշ խնդիր է. դրա համար հարկաւոր է հերոսական ջանք, հարկաւոր է արագ, խիստ բուժիչ միջոց, դրա համար հարկաւոր է „բժշկան անմիջական օդնութիւն...“

— Ինչպէս...

— Երկուսից մէկը. կամ պէտք է անմիջապէս մեռնէք, կամ հերոսական ջանք անէք տանել ճակատագրից ձեզ տուած ցաւալի հարուածը, անմիջապէս դարման անէք ձեր խոցված, վիրառված սրտին, որովհետեւ շարունակել հասդիրական լինելով՝ մաքրում, սրբում, ափոփում է նրա սիրութ, բարձրացնում է նրա հոգին, բարոյականացնում նրա բարք ու վարքը, բարձրացնում է ամբոխի մտաւոր և բարոյական մակերևոյթը, բարձրացնում է մարդուն իր սեփական աչքերում...

ախ ու վախ քաշել, հասցնել ձեզ խելագարութեանն ու ապուշ դբութեանը, շարունակել այնուհետեւ ողորմելի, թէ ձեր տնձի և թէ ուրիշների համար անպէտք, ապարդիւն կեանք, քաշքշել այդ ապարդիւն կեանքը, — դա չարժէ: Ուրեմն պէտք է հերոսութիւն և հոգու ներկայութիւն ունենալ վէրքի վրա անմիջապէս մի սպեղանի դնելու, վիրաւորված, խոցված սիրտը անմիջական, արագ, խիստ անդամահատութեան կամ բժշկութեանն ենթարկելու... Ս.հա ինչպէս. դուք շատ լաւ գիտեք, որ ինչքան էլ դժբաղդ լինի մարդը, նա եթէ լաւ գիտէ, լաւ որոնէ՝ միշտ կը գտնէ աշխարհիս երեսին, իր նմանների շրջանում, իրանից աւելի էլ դժբաղդներին: Եւ աչա, երբ դուք դժբաղդ էք, անմիջապէս գտէք մի ուրիշին, որը ձեզանից աւելի էլ դժբաղդ է, խորասուզվեցէք նրա դժբաղդութեան մէջ, մասնակից եղէք նրա ցաւերին, հոգացէք նրա ցաւերի մասին, կարկառեցէք ձեզունից այդ աւելի դժբաղդին ձեր օգնութեան ձեռքը, — և ձեր սիրտը կը սփոփովի: Դուք ինչքան էլ դժբաղդ լինէք, երբ ձեզ կը ստիպէք մասնակից լինել ուրիշի, ձեզանից աւելի դժբաղդի ցաւերին, — դրանով համ ձեր կարողութեան չափ օգնութիւն հասցըած կը լինէք ուրիշին, համ էլ կը թեթևացնէք ձեր ցաւերը, ստիպված լինելով ակամալ համեմատութիւն անել ձեր ու նրա ցաւերի մէջ. իսկ գուցէ ոչ թէ միայն կը թեթևացնէք ձեր ցաւերը, այլ

ուրիշի աւելի խոր ցաւերը տեսնելով՝ նոյն իսկ խապառ կը մոռանաք ձեր սեփական ցաւերն ու տանջանքները...

Իւմասօվի այդ խօսքերին, նրա այդ խիստ, զօրեղ, վիրաբուժութուն բարոյական փիլիսոփայութեանը՝ ես ոչինչ չը պատասխանեցի. ես չափեց դուրս զգացված էի նրա խօսքերից...

Եւ ուշ էր արդէն։ Նրա սենեակում նատելով, թէ իսմելով ու խօսակցելով, մենք չէինք նկատել որ գիշերվայ ժամը մէկն էր գարձել արդէն...

Ես պէտք է մեկնէի։ Մենք երկուսս վերկացանք մեր նստարաններից։

Վազը ես կրկին վերադառնում եմ Մէնտոնա, ասեց Ալէքսանդր Իվանօվիչ ինձ գրկելով ու համբուրելով, և իմ վերջին խօսքը ձեզ, երիտասարդ բարեկամ, սա կը լինի. Եթէ մի օր ձեզ շատ դժբաղդ կը զգաք, անմիջապէս եկէք ինձ մօտ, Մէնտոնա, սակայն աշխատեցէք անպատճառ ծովով գալ և Աստուծուն ազօթեցէք, որ ծովը մըրկալի, փոթորկալի լինի, որպէս զի գրսի աշխարհի, բնութեան խիստ և զօրեղ յուզմունքը, որն աւելի վեհ է քան մեր ողորմելի մարդկալին սրտի յուզմունքը՝ հակաշիռ գտունայ ձեր ներքին աշխարհի յուզված վիճակին։ Արդէն համեմատելով ձեր փոքրիկ, հիւանդ, խոցված, վիրաւորված սրտի յուզմունքը բնութեան, ծովալին ալիքների վեհ յուզման հետ՝ դուք նշանաւոր թեթևութիւն կը զգաք... Յետոյ

ինձ մօտ, իմ բնակարանումս, մենք կը շարունակենք ձեր բժշկութիւնը. այս, ինձ մօտ դուք միշտ կը գտնէք տանջվողներ, հիւանդներ, դժբաղդներ, մեռնողներ... Նրանց վրա նայեցէք, նրանց տանջանքն ուսումնասիրեցէք, նրանց ցաւակից ու օդնական եղէք, նրանց ցաւերը ձեր ցաւերի հետ համեմատեցէք,—և դուք հետզհետէ կը դարձանէք և ձեր հիւանդ սիրտը, հետզհետէ թեթևութիւն կը զգաք։ Իսկ եթէ ինձ հարցնէք, թէ ինչի՞ ես միշտ ըրջապատում եմ ինձ դժբաղդներով, հիւանդներով, մեռնողներով, ու նրանց մասին հոգում,—դրան ես ձեզ կը պատասխանեմ, որ առողջ և ինքնաբաւական մարդուց ես ոչինչ ոգեսորութիւն ինձ համար ստանալ չեմ կարող... Միայն այն ժամանակ, երբ մարդը տանջվում է, —նա պաշտելի է, վեհ է, սքանչելի է...

Մենք կրկին զրկվեցանք և համբուրվեցանք։ Խոստովանվում եմ, ես չը կարողացայ զսպել արտասուքներս...

Երբ ես արդէն իջնում էի հիւրանոցի սանդուղտներից, կրկին ականջիս հասաւ Իւմասօվի մեղմ, համակրելի ձայնը.

— Զը մոռանաք, երբ դժբաղդ կը զգաք ձեզ, — եկէք ինձ մօտ, Մէնտոնա...

Միւս առաւօտը ես վճռեցի մի նամակ զրել Եվլինալին և ուղարկեցի նրան այդ նամակը քա-

զաքային պօստով։ Հոգեկան անորոշ դրութիւնը ինձ սաստիկ տանջում էր. Իւմասօվի խօսքերի ազգեցութեան տակ ես աւելի բարեոք համարեցի մի դառնութիւնը, լաւ թէ վատ վիճակ, քան թէ տանջանքներով մի այն անորոշ դրութիւնը, որի մէջ ես գտնվում էի, արդէն մի քանի ամիս շարունակ։

Նամակումս ես խնդրում էի Եվելինալին շնորհ անել ինձ մի տեսակցութիւն նշանակել, երբ նա կուգենայ, երբ ազատ կը լինի... Միայն թէ մենք երկուսով մենակ լինէինք ու ես կարողանալի ինձ տանջող մի քանի հարցերի մասին նրանից բացատրութիւն ստանալ։ Ինձ անտանելի էր դարձել արդէն նրա մօտ մտնելով, ամեն անդամ նրա սենեակում օտար և ինձ համար անհամակրելի մարդկանց հանդիպել։ Ես այս անդամ նիցցա գալու օրից գեռոչ մի անդամ չը կարողացաւ գոնէ մի ժամի չափ մենակ տեսնվել ու խօսակցել Եվելինայի հետ։ միշտ կողմնակի մարդիկ կային նրա բնակարանում։ Բացի սրանից ես աւելացնում էի իմ նամակի տակ, որ արձակուրդների վերջանալու պատճառով ես շուտով թողնելու եմ նիցցա և այս անդամ ուղերձվելու եմ ոչ թէ Եվելիցարիա, այլ Գերմանիա, ուսումնականակելու<sup>145</sup> և աւարտելու համար։ Ուրեմն իմ շարունակելու աւարտելու համար։ Ուրեմն իմ սրտագին մնաս բարեւ, կամ ցըտեսութիւն աել...

Մի երկու ժամից յետով ես Եվելինալից, նոյն-

պէս քաղաքալին պօստով, մի պատասխան ստացալ։ Նա ինձ տեսակցութիւն էր նշանակում նոյն օրը, երեկոյեան 7 ժամին, իր տանը։ Որքան երկար թվաց ինձ այդ օրը...

Ուղիղ ժամի 7-ին, սրտի աննկարագրելի բարքախմբ, ես զանգահարում էի Եվելինալի բնակարանի դրան։ Աղախինը բաց արեց ինձ բնակարանի դուռը և լալտնեց որ թէւ օրիորդը գեռ ևս տանը չէ, բայց հրամայեց, որ երբ ես գամ, ներս խնդրեն ինձ...

—Ե՞րբ կը գալ օրիորդը.

—Նատ շուտ, մի քսան բօպէից յետով, պարոն...

Դարձեալ քսան բօպէ սպասել։ Այդ քսան բօպէն ինձ աւելի էլ երկար թվաց, քան առաւօտից մինչև երեկոյեան եօթ ժամ սպասելը...

Վերջապէս Եվելինա մտաւ և անմիջապէս ներսութիւն ինդրեց ինձանից, որ փոքր ինչ սպասել տուեց ինձ։ Նա յուզված էր երեսում, բայց աշխատում էր ծածկել իր յուզմունքը։

—Դաս ունէի և այնտեղից սաստիկ շտամում էի, որպէս զի ձեզ երկար սպասել չը տամ... Եւ ահա սաստիկ յոգնեցայ, գրեթէ շնչառապառ հասալ տուն...

Նա այդ խօսքերը աշխատում էր արտասանել

անտարբեր ձեռվ, հայելիի առջև կանգնելով ու դըլ-խարկը հանելով.

—Հա, բարեկամ, այդ ի՞նչ պ ա շ տ օ ն ա կ ա ն տեսակցութիւն էք պահանջել ինձանից, վրա բերեց նա յանկարծ...

—Ոչինչ. ես շուտով հեռանում եմ Նիցցալից և կարծեմ շատ բնական էր իմ կողմից ձեզ տեսնելու և մնաք բարե կամ ցըտեսութիւն ասելու ցանկութիւնը:

—Այս, ես ինքս կը ցաւէի, եթէ ձեր գնալուց առաջ չը տեսնէի ձեզ, բայց ինչ կը նշանակէ պահանջել, որ ոչ ոք չը լինի ինձ մօտ և մենք երկուսով անպատճառ մենակ լինենք, աւելացրեց նա դարձեալ հայելիի առջև կանգնած, իր ձեռնոցները հանելով ու մի մի անգամ իր ճոխ մազերն ուղղելով:

—Ձեզ մենակ տեսնել կարծեմ նմանապէս բընական ցանկութիւն էր իմ կողմից, Եվէլինա, քանի որ մի ամբողջ ամսվայ ընթացքում ես ձեզ մի տասն րօպէից, կամ մի քառորդ ժամից աւելի մենակ տեսնելու բաղդ չեմ ունեցել գեռ ևս...

—Ի՞նչ անենք, բարեկամ, ինքներդ էք տեսնում, որքան ես զբաղված եմ այստեղ, կրկնեց նա իր սովորական պատճառաբանութիւնը... Ինձ պէս աշխատող, բանւոր մարդը միթէ իրաւունք, կամ միջոց ունի հանգստանալ, աւելացրեց նա փոքր ինչ դառնութեամբ:

Նա հանել էր արդէն իր գլխարկն ու ձեռնոցները, ուղղել էր իր մազերը հայելիի առջև, բայց դարձեալ չէր նստում... Նա կամ մօտենում էր սեղանին, որի վրա դարսված էին նօտաները, կամ մի վայրկեանով մտնում էր իր ննջարանը, նորից դուրս էր գալիս, կրկին մօտենում էր կամ հայելիին, կամ իր գըքերի փոքրիկ պահարանին, նայում էր ծոցի ժամացոյցի վրա, անդադար կրկնելով՝ „ներեցէք, բարեկամ, մի րօպէ, և ես պատրաստ եմ ձեզ լսելու...“

Վերջապէս նա նստեց մի բազկաթոռի վրա, փոքր ինչ հեռու ինձանից, մի տեսակ հառաջանք հանելով.

—Et me voilà...

—Եվէլինա, նստեցէք խնդրեմ իմ կողքին, այս դիվանի վրա, ես շատ բան ունեմ ձեզ հարցնելու, ասեցի ես:

—Եթէ անպատճառ ցանկանում էք...

Նա վերկացաւ տեղից և դանդաղ քայլերով մօտենալով դիվանին, նստեց իմ կողքին:

—Եվէլինա, ես եկայ ձեզ մնաք բարե ասելու, բայց նախ քան հեռանամ այստեղից, ես պէտք է իմանամ ձեր բերանից ինչ է լինելու իմ կեանքիս վիճակը.

—Ես չեմ հասկանում ձեզ, բարեկամ.

—Ասեցէք, Եվէլինա, դուք դարձեալ սիրում էք ինձ առաջվալ պէս, թէ ոչ...

— Այս, միթէ գուք կարող էիք կասկածել, և  
ինչ հիման վրա...

—Եթէ այդպէս է, տուեցէք ինձ մի խոստում,  
որը հաստատէր ձեր խօսքերի անկեղծութիւնը,  
տուեցէք ինձ մի ապացուց...

—Երդվում եմ ձեզ, բարեկամ, որ ես այն  
աստիճան սիրում եմ ձեզ, որ եթէ գուք այսօր  
անկախ մարդ լինէիք, —ես այս բօպէիս պատրաստ  
կը լինէի ձեր կինը լինելու, բայց...

—Բայց ինչ...

—Բայց ես անկարող եմ ձեզ այս բօպէիս այդ  
ասկացուցը տալ, քանի որ դուք ինքներդ...

—Նարունակեցէք.

—Դեռ ես ձգտում էք դէսի ձեր անկախու-  
թիւնը... Եւ գուցէ շատ տարիներ կանցնեն, մին-  
չեւ որ կը հասնէք դրան...

—Իսկ միթէ գուք այնքան խոր, անկեղծ կեր-  
պով չէք սիրում ինձ, որ պատրաստ լինէիք սպա-  
սել մինչեւ որ ես հասնեմ այդ անկախութեանը...

—Բարեկամ, դուք զարմանալի հարցեր էք ա-  
ռաջարկում ինձ, արտասանեց նա անարբեր ձար-  
նով, ինձ վրա չը նայելով և իր թէ մեծ ուշա-  
դրութեամբ հետազոտելով իր տջ բազուկը զարդա-  
րող ապարանջանը... Իսկ եթէ ես ձեզ նոյն հարցերն  
առաջարկէի, գուք ինչ կառէիք, վերջացընկց նա իր  
զգեստն ուղղելով և կենտրոնացնելով իր հայեացքը

զգեստի տակից հազիւ երևացող իր կօշիկների ծալ-  
րերի վրա:

—Ինչ հարցեր, Եվէլինա, ասեցէք ինչ հար-  
ցեր...

—Օրինակ... ինչ ասեմ... Արդեօք խոստանում  
էք ինձ, որ երկու, կամ նոյն խոկ մի տարվայ ըն-  
թացքում չէք սիրի մի ուրիշն... Կամ արդեօք կարող  
էք հաստատալէս խոստանալ, որ մի, կամ շատ  
շատ երկու տարվայ ընթացքում անպատճառ ան-  
կախ մարդ կը դառնաք և այն...

—Առաջինը կարող եմ հաստատալէս խոս-  
տանալ, իսկ երկրորդը՝ ոչ, քանի որ առաջինը, ձեզ  
միշտ հաւատարիմ մնալը՝ ինձանից է կախված, իսկ  
երկրորդը կարող է կախված լինել և կողմնակի ար-  
գելառիթ պատճառներից...

—Ուրեմն տեսնում էք...

—Գրանից ինչ էք հետևեցնում, Եվէլինա...

—Այն, որ չը նպելով թէ մենք երկուսս մի-  
մեանց սաստիկ սիրում ենք, բայց մեզանից բոլորո-  
վին անկախ պատճառներ, մեր ցանկութեան հա-  
կառակ, կարող են արգելք լինել այդ սիրոյ յարա-  
տեսութեան: Եթէ ճակատագրի կամքով մեզ ճշմա-  
րիտ վիճակված է ամուսնանալ, դա անպատճառ  
կը կատարի էլ, և հաւատացնում եմ ձեզ՝ բարե-  
կամ, որ ես առաջինը կը լինեմ, որ ամենաերջանիկ  
կը համարեմ ինձ... բայց...

—Նարունակեցէք, ես լսում եմ.

— Բայց եթէ, դիցուք, այդ չի լինի, եթէ այդ  
ըստ պիտի լինի, — ինչի ենք շարունակում փոխա-  
դարձապէս կաշկանգել միմեանց ազատութիւնը,  
ինչի, ասէք խնդրեմ, միմիայն յուսերով ապրելով,  
իրար արգելենք կատարեալ ազատութիւնը վայե-  
լելու...

— Ես հասկանում եմ. դուք, ուրեմն, մի բան  
վճռած ունէք և ուզում էք որ ես ազատեմ ձեզ  
ձեր տուած խօսքից...

Եվէլինա վեր էր կացել դիվանից և մօտեցել  
էր պատուհանին, երեսը ինձանից դարձնելով դէ-  
պի պատուհանի ապակին.

— Ամենևին ոչ, ասեց նա մի փոքր լուսութիւ-  
նից լետոյ... Ես միայն ասում եմ, որ յուսերով և  
այն էլ, գուցէ, միայն երազական յուսերով ապրե-  
լով՝ չը պէտք է իրար արգելենք գործողութեան  
կատարեալ ազատութիւնը վայելելու. Մի խօսքով՝  
կը լինի, — աւելի լաւ, չի լինի, — այն ժամանակ մեր  
երկուսիս խղճմտանքը գոնէ հանգիստ կը լինի, որ  
մենք փոխադարձաբար արգելք չը դարձանք իրար  
ազատութեան կատարեալ վայելելուն...

Սրիւնս գլխիս էր զարկել. Ես չը գիտէի ինչ  
ասեմ... Ես պարզ տեսնում էի ալժմ, որ վերջին  
ժամանակները իմ առաջգալ իդէալիստ Եվէլինա  
բաւական մեծ աջողութեամբ օգտվել էր շրջապա-  
տողների գործնական դասերից...

— Աղաջում եմ ձեզ, եկեք և կրկին նստեցէք  
իմ կողքին, Եվէլինա.

Նա լուս կերպով հնազանդվեց ինձ.

Ես վերցրի նրա փոքրիկ ձեռքը և ուղիղ նրա  
աչքերին նայելով, հարցրի.

— Ասեցէք, ձեռքը սրտին դրած, դուք կարող  
եք յուսալ ուրիշի հետ երջանիկ լինելու...

— Գուցէ և ոչ, բայց դա շատ համարձակ եղ-  
րակացութիւն է, որ անում էք դուք, իմ արտա-  
սանած խօսքերից, շարունակեց նա, իր ձեռքը փո-  
քըր առ փոքր իմ ձեռքից յետ քաշելով... Ես հա-  
ւատացած եմ, որ ձեր բացակայութեան երկու  
տարվալ ընթացքում ես ոչ ոքի հետ չեմ ամուս-  
նայի, սակայն ինչ միտք ունի, որ մենք երկուսս  
էլ միմեանց հետ խօստումներով կապված մնանք,  
քանի որ կարող է հաւանականութիւն լինել, որ մենք  
երկուս էլ երկու տարուց յետով նմանապէս իրար  
հետ չենք ամուսնանայ...

— Ո՞վ է ասում, ամեն բան կարող է պա-  
տահել.

— Ես հենց այդ եմ ասում, ուրիշ ոչինչ: Իսկ  
եթէ կատարվի մեր ցանկացածը, — աւելի լաւ: Եւ  
որովհետև մենք պէտք է իրար տղատենք փո-  
խադարձապէս տուած մեր խստումներից, ուրեմն  
իմ կարծիքով աւելի լաւ է զուր տեղը չը պահենք  
և այն լիշտակները, որոնք այսպէս թէ այնպէս  
պարտաւորեցնում են մեզ երկուսիս, գուցէ և բո-

լորովին ապարդիւն կերպով, կապված մնալ մեր  
տուած խոստումների հետ...

— Ի՞նչ լիշտակների մասին էք խօսում...

— Ես կը խնդրէի ձեզ, ասեց նա երեսը ին-  
ձանից դարձնելով և աննպատակ կերպով նայելով  
մի ինչ որ փոքրիկ սեղանի վրա, որը դրված էր  
սենեակի աջ անկիւնում, ես ձեզ կը խնդրէի կամ  
ինձ յետ դարձնել, կամ ոչնչացնել իմ նամակներն  
ու իմ պատկերս...

Նրա բարձր կուրծքը սաստիկ երերվում էր,  
նա գժուարութեամբ շռնչ էր քաշում, ես պարզ  
և որոշ կերպով էի լսում նրա սաստկացած շնչա-  
ռութիւնը...

— Եւ դուք, Եվելինա, դուք ձեր բերանով այդ  
տեսակ զոհաբերութիւն էք պահանջում ինձանից.  
Չատ բարի, ես կը վերադարձնեմ ձեզ ձեր բոլոր  
նամակները, որ ես պահում էի ինձ մօտ որբու-  
թեան պէս, կը վերադարձնեմ ձեզ, որովհետեւ ձեր  
նամակները դարձեալ ձեզ են պատկանում. բայց  
ձեր պատկերը երբէք յետ չեմ դարձնի ձեզ, որով-  
հետեւ նա ինձ է պատկանում. նախ՝ նրա տակ ձեր  
ձեռքով գրված է ինձ ուղղված ձեր սիրալիր նուե-  
րը և երկրորդ՝ այդ պատկերն էր, որի սիրելի գծա-  
զրութիւնները ոգեսրում էին ինձ դէպի զործու-  
նէութիւն, տալիս էին ինձ ոյժ և զօրութիւն ապ-  
րելու, ձգտելու և յուսալու, — և կը շարունակեն էլ  
ապագայում... Բաւական է արդէն այն զոհաբերու-

թիւնը, որ ես անում եմ վերադարձնելով ձեզ ձեր  
նամակները. աւելի մեծ և անհնարին զոհ ինձանից  
մի պահանջէք... Եւ մինչև անգամ եթէ դուք  
վճռել էք արդէն այն ժամանակամիջոցում, մինչև  
որ ես կաւարտեմ իմ ուսումս, որը ձեզ գուցէ չա-  
փից դուրս երկար է թվում, անպատճառ ուրիշի  
հետ ամուսնանալու, ասեցէք խնդրեմ ձեզ ինչ  
փոլիտ, որ ձեր նամակները և ձեր պատկերը ընդ-  
միշտ ինձ մօտ կը մնան... Նրանք ոչ ձեզ, ոչ էլ  
ձեր պապայ ամուսնուն հարկաւոր չեն, իսկ ինձ  
հարկաւոր են, ինձ անհրաժեշտ են... Դուք ինձ  
չափից դուրս լաւ էք ճանաչում, որպէս զի կարծէիք  
թէ ես այն աստիճան ստոր մարդ լինէի, որ կարող  
լինէի ի չար գործ ածել ձեր նամակներն ու ձեր  
պատկերը. ոչ բայց տիստեղ մի ուրիշ պատճառ  
կալ, որը ես գուշակում եմ... Դուք վճռել էք,  
այն, վճռել էք ամուսնանալ, կամ գոնէ չէք ուզում,  
որ իմ ձեզ հետ ունեցած բարոյական կապը արգելը  
լինի ձեզ, եթէ կամ ենա չի ք ամուսնանալ. և ըլ  
նայելով որ շատ լաւ զիտէք թէ այն օրից երբ ես  
կիմանամ թէ դուք ամուսնացել էք ուրիշի հետ,  
ես երբէք չեմ գալ ձեզ տեսնելու, շատ և շատ հե-  
ռու կը լինեմ ձեզանից, ուրեմն ձեր պապայ մար-  
դը երբէք էլ չի իմանալ թէ դուք ինձ մի ժամա-  
նակ սիրում էիք, երբէք էլ չի իմանալ թէ ինձ  
մօտ պահված մնացին, որպէս սըբութիւն, ձեր նա-  
մակներն ու ձեր պատկերը, — բայց այնու ամենայնիւ

դուք ուզում էք մաքուր, հանգիստ խղճմտանք ունենալ, որովհետև գիտէք թէ պատահած դէպում դուք երէք այնքան քաջութիւն, հերոսութիւն չէք ունենալ ասել ձեր ապագայ մարդուն. Այս, ես սիրում էի այն երիտասարդին և նա էլ ինձ սիրում էր. նրա մէրը հասկացրեց ինձ իմ սիրած երաժշտութեան խորհրդաւոր, վեհ գաղտնիքը, իսկ իմ սէրը ծնեցրեց նրա մէջ իր հոգու ամբողջ գորութեամբ իր ազգին ծառայելու ջերմ փափագը. կամ հերոսութիւն չէք ունենալ ասել նրան. Այս, նա սիրում էր ինձ անսահման սիրով, որովհետև տարիների ընթացքում իմ սիրու նրա համար այն միակ սուրբ տաճարն էր, որի մէջ նա ազատօրէն կարող էր պաշտել իր իդէալները:»

Անչափ յուզգված, ես այլ ևս չը կարողացայ շարունակել... Ես իմ ականջներովս պարզ լսում էի իմ սրտի բարախումները: Ես նաև յացի էվէլինացի վրա.

Նա նոտած էր իմ կողքին, դիվանի վրա, փոքր ինչ կռացած, արմունկները ծնկների վրա դրած, եր դէմքը երկու ձեռքերով ծածկերով...

Եւ շարունակելով իր այդ դիվքը սրահպահնել, նա երկար լրութիւնից յետով, հազիւ լսելի ձայնով շշացաց.

— Լաւ, թող մնան ձեզ մօտ իմ նստակներն էլ, իմ պատկերս էլ...

— Բայց, էվէլինա, մի խօսք ես: Մեր անցեալ

սիրու անունով, տուեցէք ինձ ձեր երկու ձեռքերը և բացատրեցէք ինձ, ինչ պիտի լինի իմ ապագան...

Նա հեռացրեց իր ձեռքերն իր դէմքից և առանց մի խօսք անգամ արտասանելու, թոյլ տուեց ինձ վերցնել իր ձեռքերը և պահել նրանց ձեռքերիս մէջ:

— Միթէ այսուհետև ես պիտի ապրեմ անցեալի լիշտակներով և դուք բաւականանալով ձեր անցեալ նսմակներն ու ձեր պատկերը ինձ շնորհելով, այլ ևս չէք շարունակի զրել ինձ և չէք թոյլ տայ, որ ես էլ զրեմ ձեզ...

— Ի՞նչ հարկաւոր է, ասեց նա կարճ երպով...

— Ի՞նչպէս թէ ինչ հարկաւոր է. ուրեմն ես պիտի ապրեմ առանց ձեր մասին որ և է տեղեկութիւն ունենալու, իրաւունք չեմ ունենալ իմանալ առողջ էք դուք աբդեօք թէ հիւանդ, կենդանի էք թէ մեռած...

Ես թողել էի նրա ձեռքերը, վեր էի կացել դիվանից և ուղիղ նրա առջև էի կանգնել.

— Էվէլինա, դուք խուսափում էք ինձ վրա նայելուց, դուք ուրեմն մի հաստատ բան ունէք վճռած... Փոլիթ չէ: Բայց ինչ վնաս ձեր պատկին, եթէ մենք շարունակենք մեր նսմակագրութիւնը... Այս օրը, երբ ես կիմանամ թէ դուք ամուսնացել էք, հաւատացէք, որ ես ինքս կը դադարեցնեմ

նամակագրութիւնս... Իսկ եթէ յանկարծ պատահի,  
որ դուք ոչ ոքի հետ չամուսնանաք, այն ժամա-  
նակ ինչք եմ կորցնում նամակագրութեան միջոցով  
ձեզ հետ անընդհատ յարաբերութիւն ունենալու  
բաղդը...

—Ի՞նչ հարկաւոր է, կրկնեց նա այս անգամ  
ուղղակի երեսիս նայելով.

—Ուրեմն ներեցէք, բայց դա ձեր կողմից կա-  
տարեալ անիրաւութիւն, անաստուածութիւն է...  
Խլել ինձանից յուսալու վերջին միջոցը, խլել ինձա-  
նից ապրելու վերջին յուսը... Իսկ եթէ պատահի,  
որ դուք ուրիշի հետ չամուսնանաք, և նորից ի նձ  
կը սիրէք. Բնչ կը լինի ձեր դրութիւնը, երբ ա-  
միսներից, կամ աարիներից յետոյ կրկին ուղենալով  
ինձ դիմել, կիմանաք, որ արգելած լինելով ինձ ձեզ  
հետ նամակագրութիւն ունենալը, դուք հասցըիք  
ինձ խելագարութեան, կամ մահվան, կամ ինքներդ  
սառեցրիք իմ մէջ սիրու վերջին կայծը... Եվէլինա,  
այսպէս չեն վարվում մարդկալին սրտի հետ. դուք  
նախ ձեր սէրը ինձ շնորհելով, բարձրացըիք ինձ  
իմ սեփական աչքում, բարձրացըիք ինձ մինչև ձեր  
բարձրութիւնը,—և մի անգամից յետ էք մզում  
ինձ, դէն էք շպրտում իմ սիրու, ահազին բարձ-  
րութիւնից միանգամից ինձ գլուխում էք դէպի ան-  
գունդը: Դուք նախ ստեղծեցիք իմ սրտի մէջ մի  
դրախտ և ապա ձեր սեփական ձեռքով քանդում  
էք այդ դրախտը... Մէթէ դուք չը դիտէք, որ ձեզ

ճանաչելու օրից դուք էիք իմ ամբողջ աշխարհը.  
և հիմա դուք ուզում էք, որ ես դեռ չը մեռած,  
կտրեմ իմ բոլոր յարաբերութիւններն այդ աշխար-  
հի հետ... Ալգովէս վարվում են միմիայն յանցա-  
ւորների հետ. նրանց փակում են բանտի մէջ,  
կտրում են նրանց բոլոր յարաբերութիւնները դրսի  
աշխարհի, զբախ օդի հետ,—բայց ես յանցաւոր չեմ,  
Եվէլինա...

Ես այլ ես ոյժ չունէի խօսելու. ես նորից նըս-  
տեցի գիվանի վրա. Եվէլինա կրկին նստած էր իր  
առաջվայ գիրքում, երեսը ձեռքերով ծածկելով:

—Ես կարող եմ միայն այսքան ասել ձեզ,  
յանկարծ սկսեց խօսել նա, որ ես այսուհետեւ նա-  
մակ չեմ գրի ձեզ...

—Դա բոլորովին տւելորդ և ապարդիւն կը  
լինի, որովհետեւ ես բարովական ոյժ չեմ ունենալ  
ձեզ պատասխանելու...

Հիմա ինձ ամեն բան պարզ եղաւ. ուրեմն նա  
ամեն բան առաջուց որոշել էր... Ես մնացել էի  
սառած, ուղեղս դադարել էր մտածելուց, սիրոս  
դադարել էր բարախելուց, ինձ թվում էր, թէ  
կեանքը հեռանում է ինձանից... Ես միանգամից  
կորցըել էի ամեն բան, ինչ որ թանգ էր ինձ և  
զգում էի, որ դրա հետ միասին պիտի կորցնէի և  
կեանքս: Ինձ թվում էր, թէ ես այլ ևս կենդանի

մարդ չեմ, այլ ոտի վրա կանգնած, մի տեսակ շարժվող դիակ...

Այլ ևս խօսել աւելորդ էր և ես այլ ևս ոչ  
ոյժ և ոչ կարողութիւն ունէի խօսելու...

Ես մեքենայաբար մեկնեցի Եվելինալին իմ  
ձեռքը, մեքենայաբար շանջացի «մնաք բարեւ» խօս-  
քը և մեքենայաբար ու անհաստատ քայլերով դի-  
մեցի բնակարանի ելքին...

Երբ արդէն սանդուզախ գլխին կանգնած, ես  
զգացի թէ բնակարանի դուռը իմ ետևից յետ դըր-  
վեց, ես կարծեցի թէ անմիջապէս կը ցնորվեմ...  
Ես ուզեցի աղաղակել, կանչել, կրկին զանգակ տալ  
Եվելինալի բնակարանի դրան... Ուզեղս հրաժար-  
վում էր հաւատալուց, թէ այդ բոլորը կարող էր  
իրաւ պատահել... Ես ճշմարիտ ձեռքս տարայ դէ-  
պի զանգակի կոժը, — բայց անմիջապէս խելքս զը-  
լուխս հաւաքելով, յետ քաշեցի ձեռքս... Ես հրա-  
ժարվում էի հաւատալուց, թէ կորցրել եմ իմ թան-  
գագին սէրը, իմ սիրած առարկան, ինչպէս մի  
մարդ, որը տեսներով մի մօտիկ արարած, մի սիրած  
անձնաւորութիւն դագաղի մէջ դըլած, հրաժար-  
վում է հաւատալուց, թէ իրաւ այդ սիրելի անձ-  
նաւորութիւնը մեռել է, թէ այլ ևս նրա շըթունք-  
ները չեն շարժվի բառեր արտասանելու համար, —  
և նա անդադար կրկնում է. „գուցէ սուտ է, այն,  
անկարելի է, անկարելի, որ նա մեռած լինէր...“  
Սակայն կարելի էր... թէ ինչպէս ես իջալ սան-

դուզաներից և մտայ վողոց, — ես այդ չը գիտեմ...  
Ինքս ինձ կենդանի, շարժվող դիակ կարծելով լայն,  
աղմկալի, անց ու դարձներով լի վողոց մտնելուն  
պէս, ինձ թվաց, թէ իմ չորս կողմ եղածներն էլ,  
անց ու դարձ անողներն ու կաֆէների առջև,  
տրոտուարների վրա նստողներն էլ, — բոլորն էլ՝  
խօսող, վիճաբանող, աղմուկ հանող, լազիր կարդա-  
ցող, ուտող ու խմող՝ շարժվող դիակներ էին... Ինձ  
թվում էր թէ այդ գիշերը ամբողջ քաղաքը ներ-  
կայացնում էր մի ահազին գերեզմանոց, որի բոլոր  
գերեզմանները բացվել էին և այդ գերեզմաններից  
դուրս էին եկել դիակներ, որոնք խօսում, վիճում,  
ուտում, խմում, շըջում, աղմուկ էին հանում և  
ել, շարժվող դիակներից մէկը, այդ բոլոր շարժ-  
վող դիակների միջով սառն, անզգայ, անկենդան  
էի անցնում... Եւ այդ ահազին գերեզմանոցը լու-  
սաւորված էր գագի անթիւ լապտերների անախորժ,  
կարմիր, արիւնի գոյն կրող լուսով...

Ի՞նչպէս էի հասել հիւրանոցի սենեակս, —  
ես չը գիտեմ: Գիտեմ միայն որ միւս օրը, երբ  
լուսացաւ, ես նոր նկատեցի, որ հագուստու չը հա-  
նած՝ ես պառկել էի անկողնիս մէջ... Եւ այդ գը-  
րութեան մէջ, սառն, անզգայ, մի տեսակ բթացած,  
անտարբեր, աղուշ գրութեան մէջ, մէջքի վրա  
պառկած և առաստաղի մի կետի վրա նայելով՝ ես  
անցկացրի ամբողջ գիշերը...

Յանկարծ լուսոբացին ես մի անտանելի ցաւ

զգացի սրտիս կողմը... Առաջին զգացմունքն էր՝ մի տեսակ ուրախութիւն. ախ, որքան լաւ կը լինէր հիմա յանկարծակի մեռնել, մտածեցի ես... Ես անգիտակցաբար տարայ աղուկս դէպի շրթունքներա. Ես ցանկանում էի, որ նորից արիւն թքեմ... Սակայն ոչինչ չը կար. անիծված թոքերս երեխ պընդացել, առողջացել էին...

Հիմա ինձ թվում էր, որ մի ինչ որ ծանօթ ձայն փսփսում էր ականջիս՝ „երկուսից մէկը. կամ պէտք է հերոսութիւն ունենալ մեռնելու, կամ պէտք է հերոսական ջանք անել առողջանալու և ապրելու...“ Յետոյ այդ ձայնը տեղի և աւելի որոշ դառնալով, շարունակեց՝ „իշշեցէք որ ձեզանից աւելի էլ դժբաղդներ կան աշխարհիս երեսին... Երբ դժբաղդ կը զգաք ձեզ՝ եկէք ինձ մօտ, Մէնտօնա...“

Օրը պարզ էր, արեգակը փայլում էր իր ճառագայթների ամբողջ ոլժով, սակայն մի խիստ քամի էր փչում հարաւ-արևմուտքից և հեռու հօրիզոնի վրա երեւում էին գեռ ևս փոքրիկ, բայց ուն սպառնալի ամպեր: Ահազին շոգենաւը, որը կէս ժամից լետոյ պէտք է ճանապարհ ընկնէր Զենօվա, լի ճանապարհորդներով, գեռ նիցցալի նաւահանգստից չը դուրս եկած՝ սաստիկ օրօրվում էր կանդնած տեղը... Երեւում էր որ ծովը շատ անհանդիստ է... Բոլոր ճանապարհորդների դէմքերի վրա նշմար-

վում էր անհանգիստ արտակայտութիւն, նոյն իսկ երկիւղ... Սպասվում էր վաթորիկ... Հեռուից, ծովի անսահման ամբողջ տարածութեան վրա, երեւում էին բարձրացող ու ցած իջնող ահազին ալիքներ, իրանց սպիտակ, փրփրացող կատարներով, որոնք համ փշրվում, անհետանում էին, համ էլ անմիջապէս նորից գոյանում...

Զարմանալի է լինում յայտնի հանգամանքներում մարդկացին հոգու տրամադրութիւնը... Ուրիշների դէմքերի վրա սաստիկ երկիւղ էր նկարված սպասվող փոթորկի պատճառով, իսկ ես մի տեսակ բաւականութիւն էի զգում, որ կէս ժամից լետոյ կենթարկվեմ ընութեան արտակարգ լուզման...

Մէնտօնտ նաւահանգիստ չունէր. կամ պէտք է երկաթուղով գնալի ալնտեղ, կամ ծովով մինչև Զենօվա և ապա վերադառնալի Մէնտօնա երկաթուղով: Ես ընտրեցի վէրջին ճանապարհը, որպէս զի աւելի երկար ժամանակ լինեմ ծովի վրա:

Իրաւ ծովը շատ անհանգիստ և նոյն իսկ փոթորկալի էր. քամին հետզհետէ սաստկանում էր, ալիքները հետզհետէ մեծանում, բարձրանում էին և սպառնալի էին գտանում, երկինքը հետզհետէ ծածկվում էր ու ամպերով, շուտով սկսեց լորդ անձրեւ տեղալ. ահազին շոգենաւը մի փոքրիկ և թեթեւ նաւակի պէս օրօրվում, վայր ու վեր էր թռչում, մերթ բարձրանում էր ահազին սարի պէս

բարձրութիւն ունեցող ալիքի դագաթին, մերթ խորասուզվում էր ալիքների խոր անդունդը...

Սմենքը շոգենաւում հիւանդացել էին, ամենքը մտել էին կալուտները...

Բայի կապիտանից, նաւաստիներից և ինձանից ոչ ոք չէր մնացել շոգենաւի տախտակամածի վրա... Ես անշարժ կանգնած էի տախտակամածի պատշգամբի մօտ և երկու ձեռքերովս պինդ բռնում էի պատշգամբից... Սլիքները հետզհետէ բարձրանում էին նաւի տախտակամածից բարձր, մի տեսակ միակերպ հառաջանքով փշրվում էին տախտակամածի վրա և ջրով էին ծածկում տախտակամածը... Ես ոտքից մինչեւ գլուխը թրջված էի, սակայն յամառութեամբ շարունակում էի նոյն դրութիւնը պահպանել... Ինութեան այդ կատաղի յուզմունքը, ներդաշնակվելով իմ հոգեկան յուզման հետ, կարծես մըցում էր նրա հետ, մաքառում էր նրա գէմ... Ո՞վ ում պիտի յաղթէր, — ընութեան ամենահզօր տարը, թէ մարդկալին խոցված, վիրաւորված փոքրիկ սիրտը...

Նիցցալից մինչեւ Զենօվա մեր շոգենաւը հազիւին ժամում հասաւ: Մենք գուրա էինք եկել առաւօտեան ութ ժամին, այժմ ժամի հինգն էր երեկոյեան: Երբ նաւը մտաւ Զենօվալի ընդարձակ, խաղող նաւահանգիստը, ես դեռ շարունակում էի նոյն անշարժ դրութեան մէջ մնալ տախտակամած-

ծի սկատցամբի մօտ... Յանկարծ ես զգացի թէ մէկը զարկում է ուսիս.

—Ա! le jeune homme a été brave, լաւ նաւաստի կը լինէիք, լսվեց իմ ետևից: Դա ինձ համար կատարելապէս անծանօթ, մի կօշտ և անախըթ ձայն էր:

Ես լետ նալեցի և ակամալ ժպտացի. դա մի ծերունի, յազմանդամ նաւաստի էր... Միամիտ մարդը չէր կարող հասկանալ թէ ինչ արտակարգ հանգամանքներին, ինչ տեսակ հոգեկան տրամադրութեանն էի պարտական ես, որ սառնասրտութեամբ և քաջութեամբ դիմանալ կարողացալ ծովալին սարսափելի փոթորկին...

Ափ իջնելուն պէս ես քաղց զգացի: Միթէ կեանքը, ապրելու ցանկութիւնը այդքան շուտ կարող է վերադառնալ գէպի մի անկենդան դարձած մարդկալին արարած, որը գեռ երէկ զգում էր իրան՝ մի շարժվող գիտի...

Մէնտօնա վաղ առաւօտեան հասնելուն պէս, ես հարցրի որտեղ է իւմասօվի ընակարանը. ինձ անմիջապէս ցոյց տուեցին: Փոքրիկ գիւղաքաղաքում իւմասօվին ամենքը ճանաչում էին:

Իւմասօվ, ինչպէս ես առաջուց հաւատացած էի, ընդունեց ինձ գրկարաց. մենք գրկախառնվեցանք և համբուրվեցանք: Նա այնքան տակտ ունէր, որ չը հարցրեց ինձ իմ զալու շարժառիթների

մասին. ոլարգ էր, որ նա դուշակում էր իմ գալու խսկական պատճառները... Նա ինքն չէր, որ անդադար կրկնում էր ինձ. „Երբ ձեզ դժբաղդ կը զգաք, եկէք ինձ մօտ, Մէնտօնա...“

Երբ ես մտալ, նա մենակ նստած էր իր փոքրիկ սեղանատանը և թէլ էր խմում: Նա անմիջապէս առաջարկեց ինձ մի բաժակ թէլ:

—Մինչեւ որ դուք թէլ կը խմէք, գոլցիկն, ես կերթամ, կը փոխեմ շորերս, ասեց նա. իսկ եթէ փոքր ինչ ուշանամ, կարող էք մտնել իմ արհեստանոցս և նայել իմ ձիթանկարները... Դա ձեզ քիչ ժամ կը ցըվի, աւելացրեց նա, թէլ ես ալժմ մեծ նկարներ չունեմ, այլ միայն փոքրիկ էտիւդներ... Առհասարակ, աւելացրեց նա, մենք նկարիչներս և դուք դրադներդ այդ կողմից մի և նոյն մեթօդ ենք գործ գնում. նախ երկար ժամանակ առանձին առանձին էտիւդներ ենք անում, յետոյ միացնում ենք այդ մասնաւոր փոքրիկ արդիւնաբերութիւնները մի մեծ ստեղծագործութեան մէջ:

Ես վերջացրել էի թէլս:

Քանի մի օր էր արգէն, որ ես ինքս փորձեր էի անում իմ հոգեկան տրամադրութեան վրա. այստեղ էլ ես ուզեցի փորձի ենթարկել իմ մտաւոր կարողութիւնների որքան առողջ կամ հիւանդու գրութեան մէջ լինելը. ես շտապեցի ուզել քայլեր գէպի արհեստանոցը:

Սակայն աւճղ... Իւժասօվի նկարները չը կարողացան ոչինչ տպաւորութիւն գործել ինձ վրա... Ես անկարող էի կենտրօնացնել իմ ուշադրութիւնս այս կամ այն նկարի վրա... Ես տեսնում էի միայն այլ և այլ սիւժէտներ ներկայացնող նկազներ, բագմատեսակ շրջանակների մէջ ամփոփված, սակայն ինչ էր նկարների իմաստը,—դեռ ևս հիւանդու ուզելու գժուարանում էր որոշել... Մի քանի օր էր արգէն, որ ես լրագիր կամ գիրք վեցնելիս՝ չէի հասկանում կարգացածը. հէնց որ ուզում էի զուել ուզելու, անմիջապէս ճակատս և ամբողջ գլուխս սկսում էին քրտնել, աչքերս մթնանում էին,—և ես գէն էի զցում թերթին ու գիրքը... Այդ գրութեան մէջ բնչակէս կարող էի ես ըմբռնել նկարի իմաստը: Իմ կրած բարոյական հարուածի հետևանքըն էր, որ թմբած ուզելոս կարցրել էր արտաքին տպաւորութիւններն ընդունելու իր առաջվալ յատկութիւնը...

Երկում է որ Իւժասօվ այն աստիճան նուրբ հոգերան էր, որ մտնելով արհեստանոցը, անմիջապէս նկատեց գէմքիցս իմ մոլորված, շփոթված, յուսահատ հոգեկան գրութիւնս: Ուզիշ նկարիչ կը սկսէր ցոյց տալ իր պատկերները, ձանձրացնել, թէ կուզ հիւանդ ալցելուին, իր անվերջանալի բացատրութիւններով, կը սկսէր գովել իր գլուխսը, պարծենալ գեղարուեստական աշխարհում իր ունեցած աջողութիւններով...

Իւմասօվի պէս մի նուրբ հոգեբանի համար բաւական էր երևի մի հատ հայեացք զցել իմ անտարբեր, հոգեկան տանջանքներից անզգալ, դուցէ և ապուշ դարձած դէմքի վրա՝ հասկանալու համար թէ այդպիսի հանգամանքներում ցոյց տալ գեղարուեստական ստեղծագործութիւնները, բացտրել նրանց իմաստը, --կը լինէր. „Ճայն բարբառոյ լանապատի“:

Եւ նա մտնելով արհեստանոցը և ինձ ալնտեղ դժնելով, իր զուարժ և սլարդ ձայնով գիմեց ինձ, տռաջարկելով իր հետ մի պտոյտ անել Մէնտօնալի փողոցներում.

—Իմ սովորական առաւօտեան tournée պէտք է անեմ, եկէք, բարեկամ ինձ հետ, դա ձեզ կը հետաքրքրի:

Մէնք դուրս եկանք միասին:

Փոքրիկ զիւզաքազաքում Իւմասօվին ամենքը ճանաչում էին, ամենքը նրան սիրում էին, ամեն մի որ և է բանով պարտական էր նրան...

Ահա մօտենում է մեզ մի գեղեցկադէմ երիտասարդ գեղջկուհի. ուրախ, բազգաւոր ժպիտը երեսին, նա սինդ սեղմում է Իւմասօվի ձեռքը, — Իւմասօվ բարեխօսել էր նրա ծնողների մօտ, որ մերժեն իրանց աղջկան ամուսնացնել իր սիրած երիտասարդի հետ: Նա հիմա բազգաւոր է: Ահա մի երիտասարդ զինուոր, որը անցնելով մեր մօտով,

շտապում է գլուխ տալ ու դէմքի երախտապարտ արտայատութեամբ սեղմել նկարչի ձեռքը, — Իւմասօվ ծախել էր նրա օգտին իր թանգ նկարներից մէկը և գոլացած դրամը մտցրել էր պետական գանձարանը, որպէս գրաւական երիտասարդ զինուորի համար, որն ինքն միջոց չունէր մտցնել պահանջված գրաւականը՝ ամուսնանալու իրաւունքը ձեռք բերելու համար: Ահա մի պառաւ կին, որը քիչ է մնում ընկնում է նկարչի գիրկը, իր ոսկրացած ձեռքով սեղմում է նրա ձեռքը, ամեն տեսակ օրհնութիւններ է թափում նրա զլսին, — Իւմասօվ տարիների ընթացքում ամեն օր տաք կերակուր է ուղարկում իր անից այդ անտէր պառաւին, որի խնամքին մնացել էր իր եօթ տարեկան որբ թոռը: Ահա մի ջահիլ կին, մի արհեստաւորի կին, որը հեռուից արդէն ժպտում է նկարչին ուրախ, բարեկամական, բազգաւոր, երախտագիտութեան ժպիտով, — Իւմասօվ մի օր գնացել էր յարկապէս նիցցա դրա համար, որ այնտեղից ծանօթ բժիշկ բերէ, ջահիլ կնոջ միակ զաւակին, հրեշտակի պէս սիրուն մանուկին խեղդող բկացաւից բժշկելու համար. և երեխան կենդանի մնաց...

Մի խօսքով փոքրիկ Մէնտօնալում Իւմասօվ սիրված, յարգված, պատւած, պաշտած էր ամենքից. նա ալստեղ կատարում էր և ծխական քահանալի, և բարեխօսի, և նիւթապէս օգնողի, և խորհրդատուի, և փաստաբանի, և միջնորդի, և հովանաւո-

Իւմասօվի պէս մի նուրբ հոգեբանի համար բաւական էր երևի մի հատ հայեցք զցել իմ անտարբեր, հոգեկան տանջանքներից անզգալ, գուցե և ապուշ դարձած դէմքի վրա՝ հասկանալու համար թէ այդպիսի հանգամանքներում ցոլց տալ զեղարուեստական ստեղծագործութիւնները, բացարել նրանց իմաստը, կը լինէր. „Ճայն բարբառով յանապատի“:

Եւ նա մտնելով արհեստանոցը և ինձ այնտեղ գտնելով, իր զուարժի և սլարդ ձայնով դիմեց ինձ, առաջարկելով իր հետ մի պտուտ անել Մէնտօնալի փողոցներում.

— Իմ սովորական առաւօտեան tournée պէտք է անեմ, եկէք, բարեկամ ինձ հետ, զա ձեզ կը հետաքրքրի:

Մ'ենք դուրս եկանք միասին:

Փոքրիկ գիւղաքաղաքում Իւմասօվին ամենքը ճանաչում էին, ամենքը նրան սիրում էին, ամեն մարդ մի որ և է բանով պարտական էր նրան...

Ա.Հա մօտենում է մեզ մի զեղեցկադէմ երիտասարդ գեղջկուհի. ուրախ, բաղդաւոր ժպիտը երեխին, նա սինդ սեղմում է Իւմասօվի ձեռքը, Իւմասօվ բարեխօսել էր նրա ծնողների մօտ, որ չը մերժեն իրանց աղջկան ամուսնացնել իր սիրած երիտասարդի հետ: Նա հիմա բազգաւոր է: Ա.Հա մի երիտասարդ զինուոր, որը անցնելով մեր մօտով,

շտապում է գլուխ տալ ու դէմքի երախտապարտ արտայալառութեամբ սեղմել նկարչի ձեռքը, — Իւմասօվ ծախել էր նրա օգտին իր թանգ նկարներից մէկը և գուացած դրամը մտցրել էր պետական գանձարանը, որպէս գրաւական երիտասարդ զինուորի համար, որն ինքն միջոց չունէր մտցնել պահանջված գրաւականը՝ ամուսնանալու իրաւունքը ձեռք բերելու համար: Ա.Հա մի պառաւ կին, որը քիչ է մնում ընկնում է նկարչի գիրկը, իր ոսկրացած ձեռքով սեղմում է նրա ձեռքը, ամեն տեսակ օրհնութիւններ է թափում նրա գլխին, — Իւմասօվ տարիների ընթացքում ամեն օր տաք կերակուր է ուղարկում իր տնից այդ անտէր պառաւին, որի խնամքին մնացել էր իր եօթ տարեկան որբ թոռը: Ա.Հա մի ջահիլ կին, մի արհեստաւորի կին, որը հեռուից արգէն ժպտում է նկարչին ուրախ, բարեկամական, բաղդաւոր, երախտագիտութեան ժպիտով, — Իւմասօվ մի օր գնացել էր յատկապէս նիցցա գրահամար, որ այնտեղից ծանօթ բժիշկ բերէ, ջահիլ կնոջ միակ զաւակին, հրեշտակի պէս սիրուն մանուկին խեղդող բկացաւից բժշկելու համար. և երեխան կենդանի մնաց...

Մի խօսքով փոքրիկ Մէնտօնայում Իւմասօվ սիրված, յարգված, պատւած, պաշտած էր ամենքից. նա ալստեղ կատարում էր և ծխական քահանալի, և բարեխօսի, և նիւթապէս օգնողի, և խորհրդատուի, և փաստաբանի, և միջնորդի, և հովանաւո-

րի գերը: Միջին և ստորին ժողովրդի մարմնացած նախախնամութիւն էր նա... Նա ամեն օր էր անում իր առաւտօտեան պտոյտը, ինչ եղանակ էլ լինէր Մէնտօնալում: Եւ ահա նա մտնում է մէկի տունը, միւսի խանութը, երրորդի արհեստանոցը, չորրորդի խրճիթը... Մէկին խրախուսում է, երկրորդին իր կարողութեան չափ նիւթապէս է օգնում, երրորդին օգտաւէտ խորհուրդներ է տալիս, չորրորդին գեղ է բերում, հինգերորդին խոստանում է գործը գլուխ բերել, վեցերորդի ծանր վիճակը տեսնելով՝ յանձն է առնում բարեխօսել նրա համար նիցցալի նահանգապետի մօտ... Նա թէ այստեղ, և թէ նիցցայում ամեն տեղ յարգված է, ամեն տեղ մուտք ունի:

Բայց ամենից շատ Իւմասօվի հոգատարութեան առարկայ են լինում իր հայրենակիցները, Մէնտօնա եկած անտէր, անօգնական ռուս հիւանդները: Բաւական է, որ Իւմասօվ իմացաւ թէ մի ռուս հիւանդ եկաւ Մէնտօնա, —կին լինի դա, թէ տըղամարդ, մի և նոյն է նրա համար, —նա անմիջապէս գնում է այն հիւանոցը, որտեղ ինել է հիւանդը և ծանօթանում է նրա հետ... Եւ նա կանի այդ հայրենակիցի համար ձեռքից եկածը: Իսկ եթէ հիւանդ հայրենակիցը բացի դրանից ընտանիքով բեռնաւորված մի մարդ է, մի ուսուցիչ է, կամ փոքրիկ պաշտօնեալ, որն իր վերջին կօպէկները հաւաքելով եկել է հարաւային կլիմա, իր, իր

կնոջ, կամ իր երեխալի որ և է անդարմանելի ցաւը բուժելու վերջին փորձն անելու համար, —Իւմասօվ առանց այլեալութեան, զրեթէ բռնի ոյժով, տեղափոխում է նրան իր ամբողջ ընտանիքով իր բնակարանը, որպէս զի այցելու հիւանդը համ աւելի յարմարութիւններ ունենալ, համ էլ իր նիւթական միջոցները կարողանալ խնայել... Եւ այդ գեռ բաւական չէ. նա ինքն էլ յանձն է առնում հիւանդապահի գերը, սկսում է գիշեր ցերեկ հոգալ հիւանդի մասին, նստում է նրա անկողնու մօտ և չէ խորշում հիւանդի վերաբերմամբ ամենածանր պարտաւորութիւններ կատարելուց... Եւ դա պատճառում է նրան մի անասելի բարոյական բաւականութիւն...

Զէ որ, իր ասածին համեմատ, միայն հիւանդ, տանջվող, մեռնող մարդը՝ պաշտելի է, վեհ է, սքանչելի է...

Այդ օրվայ առաւոտեան պտոյտը վերջացել էր: Մենք արդէն տուն էինք վերադառնում:

— Տեուր գուցիւք, պրимեմся զա վաշ, հիմա ձեր մասին հոգանք, բարեկամ, ասեց Իւմասօվ իր սովորական բարձրածայն և բարի ծիծառվագիւն...

Ես ոչինչ չը պատասխանեցի. Ես ակամալ ժպտացի միայն. Ես պատրաստ էի ամեն տեսակ փորձերին ենթարկել տալ իմ անձս...

Տուն մտնելով, մենք անցանք նախասենեակը, սեղանատունը, փոքրիկ սալօնը, գուշա եկանք բալկոն, ալնուհետեւ բանալով բակօնի ծալրում գտնված մի առանձնացած սենեակի դուռը, Խւմասօվ մտցրեց ինձ այդ սենեակը։

Մտնելուն պէս, նա սկսեց խօսել. մի կնոջ թարմ ձայնը պատասխանեց նրան.

—Ելենա Նիկոլաեվնա, ահա ներկայացնում եմ ձեզ իմ լաւ բարեկամին։

Ես հազիւ կարողանում եի մի բան որոշել այդ թէւ ահագին, բարձր, բայց գրեթէ կատարելապէս մութ սենեակում։ Երկու պատուհաններ բաց էին թէւ, որպէս զի անդադար մաքուր օդ մտնի սենեակը, բայց նոյն բաց պատուհանների վրա իցեցրած էին մոլոր գոյնի վարագոյրներ։

Փոքր ինչ ընտելանալով մթաւթեան, նախ և առաջ աչքերիս ընկան երկու անձնաւորութիւններ սենեակի մէջ...

Մին' մի տղամարդ, որը պառկած էր անկողնում, իսկ միւսը՝ մի ջահիլ, գեղեցիկ, թէւ շատ նիշարված և ոտքից մինչեւ գլուխ սեաւորված էին, որը նստած էր անկողնու մօտ։

Երբ Խւմասօվ ներկայացրեց ինձ ջահիլ կնոջը, սա վերկացաւ և լուռ կերպով մեկնեց ինձ իր ձեռքը։ Ես զգացի իմ ձեռքում մի փոքրիկ, քընքուշ, նիշարված, կարծես տեսնդալին ջերմ ունեցող, փոքր ինչ թաց ձեռք...

—Հիմա ձեր գերը, որպէս հիւանդապահ, անվերադաւնալի անցաւ, Ելենա Նիկոլաեվնա, շարունակեց Խւմասօվ բարձր ձախով, միացնելով իր խօսքերին ծիծաղ ու հանաքներ, չը նալելով որ հիւանդի սենեակումն էր գտնվում, և այն էլ ծանր հիւանդի...

Զահիլ կինը տիտուր կերպով ժպտաց. ամենքը սովոր էին, երեխ, Խւմասօվի բարձր սրտից բղխած, թէւ շատ անգամ անտեղի հանաքներին։

—Իրաւ, Ելենա Նիկոլաեվնա, գոլցնակա, շարունակեց նա, այլ ևս գուր տեղ մի լոգնեցնէք ձեզ, բաւական է չարչարպեցաք... Հիմա մենք երկու տղամարդիկ ենք այստեղ, հերթով կը նստենք հիւանդի անկողնու մօտ... Իսկ գուրք, գնացէք ձեր սենեակը, կարող էք կարգալ, քնել, կար անել, նամակներ գրել, թէ կուզ պար զալ... Մենք երկուսս այստեղ ենք, մեզ վրա կարող էք վստահութիւն ունենալ։

—Լաւ, կերթամ, ասեց Զահիլ կինը, հնազանդվելով և տեղից վեր կենալով։

—Այլ ևս խնդրեմ մի մտէք այստեղ, ժամանակ է որ ձեր առողջութեան մասին էլ փոքր ինչ մտածէք, վրա բերեց բարեսիրտ նկարիչ բարեկամս և երկու ձեռքով ջահիլ կնոջ ուսերից բռնելով, անդադար հանաքներ անելով, մեղմ կերպով քայլ առ քայլ առաջ մղեց նրան մինչեւ սենեակի ելքը։

Երբ ջահիլ կինը գուրս գնաց սենեակից և

Տուն մտնելով, մենք անցանք նախասենեակը, սեղանատունը, փոքրիկ սալօնը, գուրս եկանք բալկօն, այնուհետև բանալով բալկօնի ծալրում գտնված մի առանձնացած սենեակի դուռը, իւմասօվ մտցրեց ինձ այդ սենեակը:

Մտնելուն պէս, նա սկսեց խօսել. մի կնոջ թարմ ձայնը պատասխանեց նրան.

—Ելենա Նիկօլանկնա, ահա ներկալացնում եմ ձեզ իմ լաւ բարեկամին:

Ես հազիւ կարողանում էի մի բան որոշել այդ թէւ ահագին, բարձր, բայց զրեթէ կատարելապէս մուժ սենեակում. երկու պատուհաններ բաց էին թէւ, որպէս զի անդադար մաքուր օդ մտնի սենեակը, բայց նոյն բաց պատուհանների վրա իջեցրած էին մոլոր զոյնի վարագույներ:

Փոքր ինչ ընտելանալով մթութեան, նախ և առաջ աչքերիս ընկան երկու անձնաւորութիւններ սենեակի մէջ...

Մին' մի տղամարդ, որը պառկած էր անկողնում, իսկ միւսը՝ մի ջահիլ, գեղեցիկ, թէւ շատ նիշարված և ոտքից մինչև զլուխ սեւաւորված կին, որը նստած էր անկողնու մօտ:

Երբ իւմասօվ ներկալացրեց ինձ ջահիլ կնոջը, սա վերկացաւ և լուռ կերպով մեկնեց ինձ իր ձեռքը: Ես զգացի իմ ձեռքում մի փոքրիկ, քընքով, նիշարված, կարծես տենդալին ջերմ ունեցող, փոքր ինչ թաց ձեռք...

—Հիմա ձեր գերը, որպէս հիւանդապահ, անվելագառնալի անցաւ, Ելենա Նիկօլանկնա, շարունակեց իւմասօվ բարձր ձայնով, միացնելով իր խոսքերին ծիծաղ ու հանաքներ, չը նալելով որ հիւանդի սենեակումն էր գտնվում, և այն էլ ծանր հիւանդի...

Զահիլ կինը տիսուր կերպով ժպտաց. ամենքը սովոր էին, երեկ, իւմասօվի բարի սրտից բղխած, թէւ շատ անգամ անտեղի հանաքներին:

—Իրաւ, Ելենա Նիկօլանկնա, գոլցնակա, շարունակեց նա, այլ ևս զուր տեղ մի լոգնեցնէք թէւ, բաւական է չարչարիցնաք... Հիմա մենք երձեզ, բաւական է չարչարիցնաք... Հիմա մենք երկու տղամարդիկ ենք այստեղ, հերթով կը նստենք հիւանդի անկողնու մօտ... Իսկ դուք, գնացեք ձեր սենեակը, կարող էք կարգալ, քնել, կար անել, նամակներ գրել, թէ կուզ պար զալ... Մենք երկուս այստեղ ենք, մեզ վրա կարող էք վստահութիւն ունենալ:

—Լաւ, կերթամ, ասեց ջահիլ կինը, հնազանդվելով և տեղից վեր կենալով:

—Այլ ևս խնդրեմ մի մտէք այստեղ, ժամանակ է որ ձեր առողջութեան մասին էլ փոքր ինչ մտածէք, վրա բերեց բարեսիրտ նկարիչ բարեկամս և երկու ձեռքով ջահիլ կնոջ ուսերից բռնելով, անդադար հանաքներ անելով, մեղմ կերպով քայլ առ քայլ առաջ մղեց նրան մինչև սենեակի ելքը:

Երբ ջահիլ կինը դուրս գնաց սենեակից և

մենք իւմասօվի հետ մենակ մնացինք, ես մօտեցալ  
Հիւանդի անկողնուն ..

Զարմանալի, տարօրինակ զգացմունք տիրեց ինձ... Ես եկել եի այստեղ ոչ թէ հիւանդի մասին հոգալու, այլ Խմասօվի խորհրդով նրա, այդ հիւանդի տանջանքների տեսարանով՝ իմ խոցված, վիրաւորված սիրտս և իմ գլեթէ կատարելապէս խանդարսված ուղեղս բուժելու...

—Ալէքսանդր Խվանօվիչ, ասեցի ես Խւմասովին, գուշ շատ յոգնած պիտի լինէք, գնացէք հիմա, հանգստացէք, ես մենակ կը մնամ... Միայն տուեցէք ինձ անհրաժեշտ հրահանգներ ի՞նչ պէտք է անել, ինչպէս հոգալ հիւանդի մասին, ինչ գեղեցը և ինչ ժամանակամիջոցներում պէտք է տալ նրան...

— Խնդրեմ, խնդրեմ, մի շտապէք, ամեն բան  
կը լինի իր ժամանակին... Բայց այսօր, ամբողջ  
օրը և ամբողջ գիշերը մենք միասին այստեղ կը  
նստենք. Նախ ձեզ ամեն բան պէտք է ցոյց տամ,  
և շատ բան էլ ունեմ ձեզ հետ խօսելու, — իսկ  
յետով, ի հարկե, ձեզ բոլորովին մենակ կը թողնեմ. ա что вы думали.... դա ձեզ համար օգտա-  
վէտ էլ է:

Առաջին օրը և առաջին գիշերը ես ու Իւմա-  
սով միասին անցկացրինք հիւանդի անկողնու մօտ:  
Դա մի ջահիլ մարդ էր, թոքախտի վերջին աստի-

Ճանին հասած. նա կամ քնած էր լինում, կամ  
երբ արթուն էր, մի գլուխ զառանցում էր: Այ-  
ևս ովտ չէր մնացել նրա մէջ. նա ցածաքել, այ-  
լանդակվել էր: Երեսում էր թէ նա բարձր հասակի,  
դէմքի նուռը գծագրութիւններով, խարտեաշ մա-  
զերով ու կարմրագոյն, փոքրիք, նօսր միջուքով  
մարդ էր:

Իւմասօվ հրահանգներ էր տալիս ինձ թէ ինչ  
դեղեր պէտք էր տալ, ինչ ժամանակամիջոցներին,  
յոց էր տալիս ինձ թէ ինչպէս պէտք է դնել  
սառն կօմպըսներ հիւանդի գլխին և ալին,—և մի  
նոյն ժամանակ անդադար խօսում, ծիծաղում,  
և ծխում էր, ինձ էլ անդադար առաջարկում էր  
ծխել...

— Ներեցէք, Ալէքսանդր Իվանօվիչ, եթէ թոյլ  
կը տամ ինձ մի հարցմունք անել ձեզ. Հը որ հե-  
տանգին կարող է վնասել, որ մենք նրա ներկայու-  
թեամբ համ խօսում, համ ծխում ենք...

— Ի՞նչ վնաս, պատասխանեց Խւմասօվ անտար-  
բեր կերպով... Մենք մեր պարտաւորութիւնը կը  
կատարենք, կը հոգանք նրա մասին, իսկ նրան  
ինչ... Մի և նոյն է, նա էլ առողջացողը չէ... Այս  
բարձիս նա ուրիշ բան չէ, եթէ ոչ մի հետաքրքիր  
հոգեբանական նիւթ հոգեբան հետազոտողի հա-  
մար, մարդկալին տանջանքներն ուսումնասիրելու-  
ցանկացողի համար, աւելի ոչինչ...

—Բայց դարձեալ ծուխը վնասակար է թռքախ-

տով հիւանդի համար, բարձր խօսելն ու ծիծաղելը  
գուցէ և անհանգստացնում է նրան, փորձեցի ես  
պնդել իմ մտքի վրա...»

—Вздоръ, голубчикъ, шу и си нѣшнъ тѣхъ  
гашнъ фірѣтъ єѣ, кашрѣтъ и рѣтѣтъ  
խосѣхъ и се ծիէինք, наш аւելի երկար կаша-  
րѣր, քашнѣ и рѣтъողջանալու մասին шу и си խօսք  
չѣ կашрող լինել. ну допустимъ, мѣ оръ и се կը  
մեռնէր,—թѣнъ դուրս եկաւ և դրանից թѣнъ շահե-  
ցինք...

Ես ոչինչ չը պատասխանեցի բարեկամիս այդ  
տարօրինակ փիլիսօփարութեանք:

— Բայց թողնենք այդ, շարունակեց նա, և  
խօսենք ձեզ հետաքրքրող խնդրի վրա: Համեմատե-  
ցէք սրա տանջանքները ձեր տանջանքների հետ,  
սրա կնոջ դժբաղդութիւնը ձեր դժբաղդութեան  
հետ: Պատճեմ ձեզ նրանց կարծ պատճութիւնը.  
մեռնողը մի ջահիլ ինժենէր է, որը ծառալում էր  
Պէրսի նահանգում և երեք տարի է միայն, որ  
պսակվել էր. նա ուներ և մի երկու տարեկան  
տղայ զաւակ: Նա թոքախտ է ընկնում, կինը հա-  
ւաքում է իրանց վերջին խնայողութիւնը, մասսամբ  
իր ծնողներն էլ են օգնում իրան և ահա նա, իր  
մարդուն բժշկելու վերջին լուսով, հիւանդ մար-  
դու և առողջ երեխայի հետ, գալիս է Մէնտօնա  
և իջևանում է հիւրանոցում... Զէ անցնում մի ա-  
միս և երեխան մեռնում է դիմութերտից: Զահիլ

կինը միսիթարվել չէ կարող, լաց է լինում, ուեա-  
ւորվում է, կատարելաբարէս գլուխ է կորցնում...  
Ես ծանօթանում եմ նրանց հետ և տեղափոխում  
նրանց ինձ մօտ: Նիմա ասեցէք, իղձմտանքով  
ասեցէք, ձեր երկուսից ով է աւելի դժբաղդ՝ այդ  
չահիլ կինը, թէ գուք: Զահիլ, գեղեցիկ, յուսելով  
լի՝ գալիս է նա այստեղ իր հիւանդ մարդու և ա-  
ռողջ երեխալի հետ. առողջ երեխան մեռնում է  
հիւանդ հօրից առաջ, իսկ մի քանի օրից լետոյ  
նա կը թաղէ և մարդուն. և մենակ, յուսահատ-  
ված, Միջերկրական ծովի ափերից կուղերովի հե-  
ռաւոր հիւսիս, Պերմի նահանգը, կոտրված սըր-  
տով և կոտրված կեանքով, իր ծնողների տանը  
գուցէ ընդմիշտ ապաստան գտնելու համար... Ս-  
պա ասեցէք, ով է աւելի դժբաղդ...

— Զը զիտեմ, ես իմ դժբաղգութիւնը պակաս չեմ համարում... .

— Բակ եթէ ես երբէք չը կարողանամ Համու-

զել իմ սիրած կնոջ վերադարձնել ինձ իր սէրը, —  
ես հօ ընդմիշտ գժբաղդ կը լինեմ. այս, ես ըն-  
դունում եմ, որ գուցէ շատերի համար կորցնել սէ-  
րը այնքան մեծ նշանակութիւն չէր ունենայ, բայց  
գուք չէք ուրանայ, որ չափից գուրս ջերմ, ան-  
սահման և ամբողջ կեանքի համար սիրել՝ դա բնա-  
ւորութիւնից, տեմպէրամենտից է կախված... Սի-  
րոյ այդ տեսակ Փանատիկոսները սովորաբար չեն  
դիմանում սիրոյ կորստեան...

— Ես ձեզ կրկնում եմ. զանազանութիւնը դը-  
րանով է մեծ, որ գուք երկուսդ կենդանի էք, ու-  
րեմն իսկապէս ոչինչ դեռ ևս կորած չէ։ Իսկ ե-  
թէ պատահի, որ ձեր սիրած կինը ուրիշի հետ ա-  
մուսնանայ, — մխիթարվեցէք դրանով, որ նա իր  
ազատ կամքին համեմատ է կարգադրել իր բաղդը,  
մխիթարվեցէք դրանով, որ գուք նրան երջանիկ  
էք տեսնում...

— Լաւ, իսկ ես, Ալէքսանդր Իվանօվիչ, ես  
բնչ...

— Ահեք բատիոնկա, գուք դեռ այնքան երի-  
տասարդ էք, որ գեռ կարող էք երկրորդ անգամ,  
նոյն իսկ գուցէ աւելի մեծ ոլժով սիրել ուրիշին,  
և գուցէ աւելի էլ բաղդաւոր կը լինէք, քան թէ  
եթէ պսակվէք ձեր սիրոյ առաջին առարկայի հետ։  
— Չեմ կարծում...

— Իսկ գուք ինչով էք երաշխաւորում ինձ, որ  
այն աղջիկը կամ կինը, որի սիրոյ կորստեան պատ-

ճառով գուք այժմ ձեր գլուխը պատով էք տալիս,  
աւելի բաղդաւոր կը լինէք ձեր ամուսինը լինելով,  
քան ուրիշի կինը դառնալով... Գուցէ նա ձեզ հետ  
աւելի գժբաղդ կը լինէք, քան թէ ուրիշի հետ կը  
լինի... Ուրեմն ահա ձեզ և մի նոր մխիթարու-  
թիւն...

— Ալդպիսի աօֆիզմներով ամեն բերան կարելի  
է փակել, Ալէքսանդր Իվանօվիչ. ձեր խօսելու մե-  
թօդը գուցէ շատ լաւ է, որպէս անմիջական մի-  
ջոց ինձ պիտի հոգեկան հիւանդներին բժշկելու,  
ինեւը գլուխը բերելու համար, — բայց խոստովան-  
վեցէք, որ շատ էլ լօգիական չէ ձեր դատողութեան  
եղանակը...

Գրեթէ ամեն գիշեր շարունակվում էր մեր մէջ  
այդ տեսակ, կամ սրա նման խօսակցութիւն հի-  
ւանդի անկողնու մօտ. ասում եմ գրեթէ ամեն  
գիշեր, որովհետեւ մեծ մասամբ գիշերները ես մե-  
նակ էի անցկացնում հիւանդի մօտ, իսկ Խւմասօվ  
մի մի անգամ չը համբերելով, վեր էր կենում ան-  
կողնուց, հագնվում էր և մտնում էր հիւանդի սե-  
նեակը... Ս.յն ժամանակ անմիջապէս սկսվում էին  
մեր սովորական անվերջանալի խօսակցութիւնները:

Այս, մեծ մասամբ Խւմասօվ գիտմամբ մենակ  
էր թողնում ինձ հիւանդի կողքին, որպէս զի ես  
հանդիսատես լինէի մարդկային տանջանքի տեսա-  
րանին։ Ես անում էի ինչ որ կարող էի. գնում էի

կօմպէսներ հիւանդի գլխին, տալիո էի նրան դեղեր, օգնում էի նրան վերկենալու, սրբում էի թուքը նրա վերմակից, փոխում էի նրա լուայքը, չէի խորշում հիւանդապահի տմենածանը պարտաւորութիւններն անգամ կատարելուց... Այդպէս էր սրատուիրել ինձ իմ սպիտիատր-քֆիշ, նկարիչ-բանաստեղծ Իւմասօվ,—և ես հնազանդվում էի նրան անպայծան:

Այդպէս անցկացրի ևս հինգ գիշեր հիւանդի անկողնու մօտ: Վրա վեցերորդ օրը հիւանդը լուսացին աւելի վատ երևաց ինձ. նա աւելի անզուսդ կերպով էր զառանցում, նրա գէմքը ցնցումներից ալանդակվելով՝ գժոխալին արտաքայտութիւն էր ընդունել, նա սարսափելի ջանքեր էր անում տեղից վերկենալու, նայում էր ինձ վրա կատաղած գէմքով...

Նա սարսափելի, աշուելի էր գարձել: Յանկարծ նա վերջին ջանք արեց, բարձրացաւ տեղից, նստեց անկողնու վրա, և ուղիղ ինձ վրա կատաղած աչքերով նայելով՝ մի սարսափելի աղաղակ, մի գագանալին մռունչ արձակեց, ուղենալով մի և նոյն ժամանակ բռնել ինձ իր ոսկրացած ձեռքերով... Ասիս կրկին ընկնելով բարձերի վրա, շարունակեց զառանցել, ուժասպառ դրութեան մէջ:

—Ահա, երիտասարդ բարեկամ, ինչպէս են մեռնում գէմօկրատները, լսկեց յանկարծ Իւմասօվի ձալինը:

Ես չէի նկատել, թէ նա մտել էր հիւանդի սենեակը և կանգնել իմ ետեից:

—Եւ գուք չէք զմացվում, շարունակեց նա...

—Ինչով, բարեկամ...

—Այդ գէմօկրատի տանջանքներով: Դուք որ և է ժամանակ մտած էք անատօմիական սրահը, տեսած էք վիվիսեկցիա, կենդանի անասուններին անդամահատելու փորձերը...

—Այս, սրատահել է, որ ներկայ եմ գտնվել այդ փորձերին:

—Ուրեմն նկատած կը լինէք, թէ ինչ մեծ զանազանութիւն կալ մի արիստօկրատ և մի գէմօկրատ շան մահվան եղանակի մէջ: Երբ սլրօֆէսօրը սկսում է անդամահատել տան մէջ մեծացրած քնքոյշ, արիստօկրատ մի շնիկ, —դա սլրօֆէսօրի դանակի տակ մի երկու անգամ ճիչ կարձակէ միայն և իսկոյն կը սատկի: Բայց չէք լիշտում ինչքան երկար ժամանակ մաքառում է մահվան դէմ անդամահատական փորձին ենթարկվող փողոցալին գէմօկրատ շունը... Նա հառաչում, կռւում, մաքառում է մահվան դէմ և երկար, շատ երկար ժամանակ անձնատուր չէ լինում մահվան... Այսպէս, բարեկամ, և մարդիկ, գէմօկրատ մարդը կարող է երկար ժամանակ տանել տին տանջանքը, որին մի օր էլ չէր գիմանալ քնքոյշ արիստօկրատը... Ահա, նայեցէք այս մեր հիւանդի վրա: Կատօպայ, բատօնք, դեմօրաց: Ուրիշը, արիս-

տոկրատը, վաղուց արդէն մեռած, զոհ գնացած կը լինէր հիւանդութեան. իսկ սրա կազմուածքը ըստեղծված է տոկուն մաքառման համար...

Եւ մօտենալով անկողնուն ու իր ձեռքով սըրբելով հիւանդի ճակատի քրտինքը, նա մի քանի անգամ կրկնեց. Այդպէս են մեռնում դեմօկրատները... Ահա դա է մեր, դէմօկրատների, նշանաբանը, բարեկամ. անձնատուր լինելուց առաջ էլ, որքան հնար է, երկար ժամանակ մաքառել...

Միւս օրը, լուսադիմին մեր հիւանդը վախճանվեց:

Թաղման հանդէսի միւս օրը, ես և Խւմասօվ սկսեցինք համոզել ջահիլ ալրին փոքր ինչ դուրս գալ, ցրվել, մաքուր օդ շնչել, գնալ մեզ հետ մանգալ գիւղաքաղաքից դուրս: Վերջապէս կարողացանք համոզել նրան գնալ մեզ հետ ծովի ափում գտնվող մօտակայ ձիթենու անտառը:

Հասնելով անտառը, ես և Խւմասօվ նստեցինք խոտի վրա, մէջքը մէջքին դէմ տալով, իսկ տիկինը մնաց կանգնած, լենվելով մի ստուերախիտ ձիթենու հաստ բունին: Երեկոն հրաշալի էր. գեռարեղակը մայր չէր մտել և իր վերջին ճառագալթներն արձակելով, ներելում էր. ծովն ու ցամաքը ալկարմիր գոյնով: Ծովը կատարելապէս հանդարտ էր... ես ակամալ լիշեցի մի քանի օր սրանից առաջ եղած փոթորիկը, երբ ես նիցցալից դէպի Զենօվա

շոգենաւով էի գալիս... Յանկարծ ինձ թվաց որ շատ և շատ ժամանակ էր անցել այն օրից յետոյ... Զարմանալի է որ երեքս էլ միատեղ ժողովված, չէինք էլ խօսում միմեանց մէջ... Եւ ինչ հարկ կար խօսելու... Մեր փոխագարձ մտքերը մենք երեքս էլ լաւ էինք հասկանում. իւրաքանչիւրի ներքին աշխարհը ներդաշնակվում էր միւսի ներքին աշխարհին... Երեքս իրար կատարելապէս օքին աշխարհին... Երեքս իրար կատարելապէս օտար,— կարծես ազգական էինք դարձել, այն աստար,— կարծես ազգական էինք դարձել, այն աստիճան համերաշխ էր մեր բոլորիս հոգեկան տրամադրութիւնը: Ամեն մէկը մեզանից երկու մնացածների համար համ օտար էր, համ էլ շատ նոր ծանօթ, — սակայն բոլորիս հոգեկան տանջանքների միանմանութիւնը այս բօպէիս ստեղծել էր մեզանից կարծես մի ընտանիք...

Այս, բնութիւնը հրաշալի էր, եղանակն էլ մեղմ և զով...

Միայն հարաւում կարելի է տեսնել հակասութիւններից հիւսված հրաշալի ներդաշնակութիւն... Մոյզ կապոյտ հանդարտ ծով, բաց կապոյտ երկինք, ծովեզրի ժայռերի կարմիր գոյնը, ձիթենու անտառի մոյզ կանաչը, հիւսիսի կողմը գծագրվող Ալպեան սարերի մանիշակագոյն կօնտուրները, — ալդ բոլորը լուսաւորվում էր մայր-մտնող արեգակի ճառագալթների կարմիր լուսով...

Ես ակամալ հայեացքս ուղղեցի դէպի ջահիլ կինը... նա շարունակում էր անշարժ կանգնել

ծառի բունին յենգած և ժամանակ առ ժամանակ՝  
դարձնում էր մեզանից իր երեսը և իր թաշկինա-  
կով իր աչքերն էր սրբում։ Ոտքից մինչև գլուխը  
ուստորված, միայն իր սպիտակ թաշկինակը, ո-  
րը նա իր նոյնքան սպիտակ ձեռքերումն էր  
բոնում, կազմում էր իր ձեռքերի հետ միասին  
մի մեծ և անկանոն սպիտակ բիծ իր սե զգեստի  
ֆոնի վրա... Նա գեղեցիկ էր այդ գերքում...

Խւմասօվ նոյնպէս նաև նրա վրա. նրա իւ-  
մօրը, ինչպէս միշտ, անսպառելի էր.

—Ելենա Նիկոլաեվնա, ասեց յանկարծ նկարիչը,  
եթէ հս կօրսիկացի, կամ իմ բարեկամի պէս արե-  
ւելցի լինէի, ու մի խանչալ էլ ունենալի ձեռքումս,  
—Աստուած վկայ ես ձեզ այս բօպէիս տեղն ու  
տեղը կը սպանէի...

—Ինչի, Ալէքսանդր Նիկանօվիչ, զարմացած  
հարցրեց ջահիլ կինը, գուցէ հանաքը լուրջ խօսքի  
տեղ ընդունելով.

—Ինչի... որովհետեւ դուք ձեր լացով ու  
թթու գէմքով մի աններդաշնակ բիծ էք կազմում  
այդ պալծառ, զուարթ, հրաշալի, ներդաշնակ բնու-  
թեան մէջ. տեսնում էք ինչքան գեղեցիկ է բնու-  
թեանը, ինչպէս զուարթ և անհոգ երգում են հա-  
զարաւոր թռչուններ մեր գլուխն սփոված անտա-  
ռի կամարի տակ... Իսկ դուք, որ գեռ ալդքան  
ջահիլ էք, ալդքան գեղեցիկ, դուք, որ կարսող էք  
գեռ սիրել և ուրիշն անսահման մէր ներշնչել,

—դուք ապարդիւն կերպով և միայն ձեզ վնասե-  
լով, անդադար լաց էք լինում այն կոտուաների  
մասին, որոնց այլ ևս չէք կարող վերադարձնել...  
Պէտք է լաց լինել, Ելենա Նիկոլաեվնա, կենդանի  
և տանջվող մարդկանց վրա,—իսկ մեռածները հօ-  
չեն տանջվում այլ ևս...

—Ալէքսանդր Նիկանօվիչ, դուք շատ պահան-  
ջող էք, բարեկամ, ընդմիջեց նրան ջահիլ կինը...  
Համբերեցէք փոքր ինչ, գուցէ ես էլ մի օր գուարթ-  
եւ ուրախ կը լինեմ, քանի որ, ինչպէս ասում են,  
ժամանակը ամեն ինչ բուժում է, բայց մի մոռա-  
ցէք, որ ես գեռ եմ կորցրել ինձ համար եր-  
կու ամենաթանգագին արարածներ, և այսօր այս-  
տեղից դէպի հեռու հայրենիքս հեռանալով, ես  
թողնում եմ ձեր գեղեցիկ Միջերկրական ծովի ա-  
փում՝ երկու գերեզմաններ...

Ջահիլ կինը սկսեց աւելի էլ լաց լինել, սկսեց  
հեկեկալ...

Ես վերկացալ տեղիցս և ուղղակի կանգնելով  
Խւմասօվի դիմաց, ցած ձայնով ասեցի նրան, որ  
հարկաւոր է աւելի զգուշ լինել, հարկաւոր է խը-  
նայել ջահիլ կնոջ խախտված զղերե...

Որքան էր իմ զարմանքը, երբ նայելով Խւմա-  
սօվի աչքերին, ես նկատեցի թէ իմ սառնա-  
սիրտ փիլիսօփալի աչքերն էլ լցվել էին արտասու-  
քով...

Ալո՛, ես միակ էի, որի աչքերում արտասուքները իսպառ ցամաքել էին...

Միւս օրը ես մնաս բարեւ էի ասում Իւմասօվին և Ելենա Նիկոլաեվնային:

Ես ինձ հոգով և մարմնով աւելի կազդուրված էի զգում և վճռել էի ուղևորվել Դերմանիս, այնտեղի համաշարաններից մինում իմ ուսումս շարունակելու համար: Հաստատ դեռ չէի որոշել, բայց ուզում էի Հերթը բարդ գնալ:

Երբ ես տիկնոջ մօտեցալ, նրանից հրաժարականն առնելու համար, Ելենա Նիկոլաեվնա մեկնեց ինձ իր ձեռքը, պինդ սեղմեց ձեռքս և սկսեց հազար ու մի շնորհակալութիւններ լայտնել իմ, ինչպէս նա անուանեց, հերոսական վարմունքի համար.

— Ի՞նչպէս շնորհակալութիւն լայտնեմ ձեզ ձեր արածի համար, աւելացրեց նա. դուք ձեզ համար օտար, անծանօթ մարդու անկողնու մօտ անքուն գիշերներ էք անցկացրել և այդքան հոգացել իմ հանգուցեալ մարդու մասին...

Ես ամաչեցի, չը գիտէի ինչ պատասխանեմ: Եթէ ջահիլ կինը գիտենար, որ ես եկած էի ոչ թէ դրա համար, որ հոգամ իր հիւանդ մարդու մասին, որի գոլութիւնն անդամ անլայտ էր ինձ, այլ դրա համար, որ սփոփէմ սիրտս ուրիշի տանջանքը տեսնելով, — նա ինձ երևի չէր լայտնի այդ-

քան շնորհակալութիւններ... Ուղիղ է, ես խըղճմտաւոր կերպով կատարեցի իմ լանձն առած հիւանդապահի պաշտօնը, բայց հօ իմ գլխաւոր նպատակըն այդ չէր, այլ այն, որ տանջվող մարդկալին արարածների նմուշները գտնեմ իմ բարեկամ փելիսօփայ-նկարչի տանը և նրանց տանջանքն իմի հետ բաղդագելով՝ փորձեմ նորից արթնանալու, սթափվելու իմ հոգեկան թմրութիւնից: Իսկ ով կը լիներ այդ տանջվողը, — այդ ես առաջուց չը գիտէի և չէի էլ կարող իմանալ...

Իրաւ, ես հօ չէի կարող ջահիլ կնոջն ասել, „Ընդհակառակն, ես եմ շնորհակալ ձեզանից, տիկին, որ թոյլ տուեցիք ինձ, հոգեպէս բժշկվելու համար, հոգալ ձեր տանջվող ամուսնու մասին...“

Ես պատրաստ էի նրանից ներողութիւն խըղճըել, — բայց ինչ ձեռով...

Սակայն այն րօպէին, երբ ես զգացի իմ ձեռքումս ջահիլ կնոջ փոքրիկ, նիհար, քնքուշ, ջերմ, տեսդալին ձեռքը, լսեցի նրա ջերմ շնորհակալութիւնները և նկատեցի նրա աչքերում արտասուքի կաթիներ, — ես հասկացալ, որ հակառակ իմ սկզբնական դիտաւորութեան, ես այլ ևս օտար չէի նրա համար... Այսպէս թէ այնպէս, մասնակից դառնալով նրա և նրա մեռած մարդու հոգեկան տանջանքներին, կրելով սրտումս էլ նոյնանման տանջանքներ, ակամայ և բնական օրէնքի զօրութեամբ մի տեսակ ազգակցական կապ էր հաստատվել մեր

մէջ, այն մարդկալին արարածների մէջ, որոնք մի քանի օր առաջ իրար գոյութեան մասին անգամ տեղեկութիւն չունելին...

Այն միտքը, որ տանջանքն ազնւացնում, մաքրում է մարդկանց սրտերը, իրար մօտեցնում, հզրայրացնում է մարդկանց, — յանկարծ մխիթարեցինձ... Նոյն բօպէին սիրտս լցվեց համ մի տեսակ եղբայրական համակրութեամբ, համ էլ անսահման երախտագիտական գգացմունքով դէպի երիտասարդ կինը, որի համար ես դարձել էի եզրա լը ակից տան ջանքի մէջ...

Իմ մէջ կատարվեց մի անսպասելի լեզափոխութիւն. աչքերս, որոնք քանի մի օր է արդէն անընդունակ էին դարձել արտասուք արտագրելու, այդ աչքերը յանկարծ լցվեցան արտասուքներով և ես յանկարծ, մի արագ շարժուածքով, մօտեցրի շրթունքներիս երիտասարդ կնոջ նիհար, ջերմ, փոքրիկ ձեռքը...

Թող այն համբոյը, որ ես դրոշմեցի այդ ձեռքի վրա, մտածեցի ես, լինի և երախտագիտութեան արտալայտութիւն, և տանջվող եղբայրակցի կողմից համակրութեան արտալայտութիւն, և վերջապէս ասլացոց, որ ես այդ կնոջից իմ ներման շնորհը ստացել եմ...

Սպա ես մօտեցայ Խւմասօվին: Մենք վերջին անգամ գրկվեցանք և համբուլվեցանք: Դրանից

իտու ես այլ ես երբէք կեանքումս պատահած չեմ Սլէքսանդր Խվանօվիչին...

Ինձ բարի ճանապարհ և աջողութիւն մաղթելիս, նա աւելացրեց:

— Զէ, բարեկամ, ես ինչպէս տեսնում եմ, ձեր բանը վատ չէ զնում... Դուք այնքան շուտ կազդուրվեցաք և վերածնվեցաք, որ մինչև անգամ կարող էք լաց լինել, — դա լաւ, նշան է...

Միթէ կարող է հիւանդ մարդը այդքան շուտ կազդուրվել թէ հոգով և թէ մարմնով, միթէ կարելի է այդքան արագ և անսպասելի կերպով վերադառնալ կետնքին, նորից իր մէջ զգալ ձգում գէպի կեանք, գէպի տալրելու ցանկութիւն, միթէ կարելի է այդքան շուտ վերածնվել... Սակայն ամենահզօր և հրաշագործ, միշտ վերանորոգող, միշտ ժարմացնող, ամեն բան անընդհատաբար յեղափոխող բնութեան ձեռքում անկարելին՝ կարելի է դառնում...

Սարու, անտառապատ, առողջարար, մաքուր, կոկիկ, գեղեցիկ, ինտելլիգէնտ Նէյլլերզում ես կատարելապէս վերածնվեցալ. ես կրկն ձեռք էի բերել իմ առաջվայ եռանդն ու աշխոյթը, սաստիկ պարապում էի, աշխատասէր էի, շատ կարգում էի, ամեն բանով հետաքրքրվում, ճշդութեամբ հետեւում էի ուսուցչապէտներիս դասերին, հեշտութեամբ ըմբռնում էի նրանց մտքերը, առաջողի-

մութիւն էի անում ուսման մէջ... Ես զարմանում էի երբ լսում էի թէ իմ պրօֆէսօրներից մէկն ու մէկը ինձ ը նդունակ... միթէ, մտածում էի՝ ես իմ ընդունակութիւններս չէի կորցրել։ Այդ բաւական չէր. ես այնքան թարմ ոլժ էի զգում արդէն իմ մէջ, որ երեկոներին, պարապմունքներից յետոյ, կարողանում էի իմ համալսարանական ընկերներիս հետ բաժանել նրանց ուրախ և անհոգ ժամերը մի որ և է հիւրանոցում, գարեջրատանը, կամ քաղաքից դուրս նկարչական բնութեան ծոցում գըտնվող մի որ և է փոքրիկ պանդոկի մէջ... Ես ամբողջ սրտով մասնակցում էի նրանց ուրախ խօսակցութիւններին, նրանց լուրջ վիճաբանութիւններին, նրանց հետ միասին, գինու կամ գարեջրի բաժանը ձեռին, ճառում էի մեր իւրաքանչիւրի ապագայ հասարակաց գործունէութեան մասին... Այդ ճառումն էին արտայալովում մեր յոյսերը մարդկութեանը պիտանի լինելու, մեզանից իւրաքանչիւրի յոյսերը իր ազգին իր կարողութեան չափ օգտաւէտ լինելու մասին...

Այո՛, ես կազդուրվել էի. խոցված, վիրաւորված սիրս աաղացել, բուժվել էր, —միայն դեռ երկար տարիներ շարունակ ես չէի կարող լսել երաժշտութիւնը... Երաժշտութիւնը, իմ սիրած երաժշտութիւնը՝ ինձ ատելի էր դարձել։ Եւ երբ համալսարան գնալիս կամ համալսարանից վերա-

դառնալիս, ես անցնում էի Նէրլեռդի գեղեցիկ, մաքուր, ծառազարդ լայն փողոցներով, ու տներից մինի բաց պատուհաններից լսում էին պիանօիներդաշնակ հնչիւնները, —մի տեսակ սարսուռ. էի զգում ես և արագացնելով քայլերս, աշխատում էի շուտով անցնել, հեռանալ այդ տան մօտից... Այո՛, երաժշտութիւնը ատելի էր դարձել ինձ և երկար ժամանակ ես չէի կարող յաճախել ոչ թատրօն, ոչ էլ կօնցէրտներ...

Անցել էին երկու տարի, այսինքն չորս մէմէստր, —և ես կարողացաւ աւարտել ուսումս, հարցաքննութիւններս տալ... Եւ այն օրը, երբ հարցաքննութիւններս վերջացնելուց յետոյ, համալսարանի մեծ սրահում, ըէկտօրի և դէկանի ներկայութեամբ ես պիտի երգէի մինչև մահս գիտութեանը հաւատարիմ մնալու, սովորական, ընդունված երգման Փօրմուլան լատիներէն լեզուով կրկնելիս՝ ես իմ սրտում կրկնում էի և մի այլ Փօրմուլա... Այո՛, ես երգվում էի անցեալի լիշատակների սրբութեան անունով նուիրել իմ թուլ ոլժերս իմ ազգի մասայութեան, բարձր բռնել իմ ձեռքումս անխարդախ գաղափարների դրօշակը և կարողութեանս չափ իմ իմացածն ու զգացածը իմ հալբենակիցների մէջ տարածել...

Երկու երեք շաբաթ էր անցել այն օրից, երբ ես հարցաքննութիւններս վերջացրել էի. ես արդէն կարգի էի բերում զըքերս, իրեղէններս ու

մասամբ թղթերս և իմ ունեցածս գարսում էին ճանապարհորդական արկղիս մէջ... Այդտեղ, լիշողութեանս մէջ սկսեց ակամայ վերանորոգվել իմ ուստանողական կետնքի ամբողջ անցեալը, իր ուրախ և տխուր կողմերով... Սակայն արտասահմանում անցկացրած իմ վեց տարվայ շրջանից Նէրդերուում իմ անցրած օրերը ամենաքաղցր լիշողութիւններն էին թողել սրտիս մէջ... Ես ակամայ զգացվեցալ... Այս, շուտով թողնելու եմ քեզ, իմ սիրուն Նէրդերգ, շուտով մնաս բարեւ կասեմ քեզ, և ով զիտէ, գուցէ երբէք էլ իմ կեանքումս չեմ տեսնի քեզ... Մնաք բարեւ իմ ազնիւ ուսուցիչներ, գուք էիք ջանում պատուաստել ինձ ձեզ ոգեսորող բարձր ուսումնական, անխարդախ մտքերը. մնաք բարեւ իմ ազնիւ ընկերներ, մարդկութեան թարմ ալագայ սերունդ կազմող երիտասարդական ոյթեր, քաղաքակիրթ Եւրօպալի ապագայ ազնիւ գործիչներ. մնաս բարեւ և գու համալսարան, անկաշառ գիտութեան տաճար, որի պատերի ներսը մտնելով մարդու ներշնչվում է մի սրբազն երկիւղածութեամբ գէպի գիտութեան անլազմթելի, ամենահզօր ոյժը. մնաք բարեւ և գուք երիտասարդական խրնջուքներ և անմեղ, սակայն միշտ գաղափարական կետնքի հետ անբաժան քէֆեր. մնաս բարեւ և գու գերմանական նահապետական հիւրատէր ընտանիք, գու, որ լայն մարդաբարական զգացմունքով ներշնչված՝ ամեն ջանք էիր անում, որքան հնաբ

Է, սիրալիք և ջերմ կերպով ընդունել, հիւրասիրել  
օտարազգի ուսանողին, նրան մռացնել տալու հա-  
մար իր հեռաւոր հայրենիքի և ընտանիքի ժամա-  
նակաւոր բացակայութիւնը. մնաս բարեւ և դու-  
սիրուն Գրէտխըն, կամ Մարիխըն, գերմանական  
ամերիկա սիրուն և սիրելի աղջկալ տիպարը. մեր  
ուրախ և անհոգ ժամերում դու էիր մեզ ծառա-  
յում գարեջրատանը, բերելով մեզ փրփրալի կար-  
մրագոյն հիւթով լի բաժակներ, մեզանից իւրա-  
քանչիւրի առջև մի մի բաժակ դնելով սեղանի  
վրա... Եւ երբ որ մեզանից մեկին դու ուզում էիր  
արտօնացնել քո առանձին շնորհով, բաժակը նրա  
առջեւ դնելուց առաջ, դու դեռ մօտեցնում էիր  
այդ բաժակը քո շրթունքներին, նախ թաց էիր  
անում քո սիրուն շրթունքները բաժակի երեսին  
կանգնած փրփուրի մէջ և ապա տալիս էիր մնա-  
կանգնած փրփուրի մէջ և ապա տալիս էիր մնա-  
կանգնած փրփուրի մէջ և ապա տալիս էիր մնա-  
կանգնած փրփուրի մէջ և ապա տալիս էիր մնա-

Այս մասք բարեւ դուք ամենքդ, մնաս բարեւ  
դու մաքուր զիտութեան սըլավալր... Շուտով եռ  
թողնելու եմ քեզ և մեկնելու եմ դէպի հեռու ա-  
րևելք...

Եւ իրաւ, ես արդէն պատրաստ էի ճանակմբԴ

ընկնելու և օրից օր միայն գրասնի էի սպասում իմ  
ընտանիքից, որպէս զի ճանապարհ ընկնեմ:

Ահա և նամակաբերը, որը ճշդութեամբ ամեն օր, որոշ ժամին է մտնում սենեակս։ Այսօր նա բերում է ինձ երկու հատ նամակ միայն. Նրանցից մինը իմ սպասած գլամի ծրարն է, իսկ միւսը...

Ես նայում եմ ծրաբի հասցէի վրա, և աչքեցիս չեմ հաւատում... Միթէ ճշմարիս է, միթէ դա նրա նամակն է... Այո՛, նրա գիրն է դա, Եվելինայի գիրը... Երկու աարի առաջ պատահածը նորից վերակենդանում է իմ լիշողութեանս մէջ, արդէն բժշկված վերքերս կարծես նորից պիտի բացվես...

Գողացող ձեռքերով պատռում եմ ևս ծրաբը...  
Այն, քա Եվլինակի նամակն է, նա կըկին Ցիրի-  
խումն է, ինչպէս երկու տարի առաջ... բայց ևս  
այնտեղ չեմ...

Ահա նամակի բովանդակութիւնը.  
Էվելինա իմացել էր Ցիւրիխի Հալ ուսանողներից, որ ես գօկտօրի Հարցաքննութիւնն էի տուել և չերմ կերպով շնորհաւորում էր ինձ ուսման աւարտման պատճառով. ապա նա հիացած խօսում էր Ցիւրիխի մասին և ակնարկում էր այն երջանիկ ժամանակներին, երբ, երկու տարի առաջ, մենք միասին էինք անցկացրել մի երկու ամիս գեղեցիկ Ցիւրիխում...

Դա էր ամբողջ նամակը, բայց նա ինձ սաստիկ վիրաւորեց. ես զգում էի, որ իմ մարդկալին ինքնանիրութիւնն ունակութիւնն էր արած... Աւքեմն գու չամուսնացար, մտածեցի ես, և հիմա ճարագու չառված էլի ինձ ես դիմում, ու զում ես միանգամից հրաշքի պէս կենդանացնել այն սէրը, որը երկու տարի առաջ անողորմ կերպով գէն շարտեցիր, անողորմ կերպով սպանեցիր... Իսկ եթէ այդ ժամանակամիջոցում ես խելագարվէի, մեռնէի, կամ եթէ վերջապէս կենդանի մնալով, աւրիշին սիրէի... Դեռ զրկում ես ինձ ընդմիշտ իմ կեանքի միակ լուսից, նամակագրութիւն քեզ հետ պահպանելուց, գրանով անտարակոյս հասցնում ես ինձ վերջին ծալը յուսահատութեան, —իսկ յստոյ, երբ քեզ չէ աջողվում ուրիշի հետ ամուսնալու, իմաննալով որ ես ուսումս աւարտել եմ, նորից դիմում ես ինձ, առանց մտածելու թէ քո առաջվայ վարմունքով եթէ ինձ հասցրած էլ չը լինէիր մահվան, գոնէ շատ հեշտութեամբ կարող էիր մեջնել իմ մէջ սիրոյ զգացմունքի վերջին աշխատելու կամ ժամանակէս ցամաքեցնել իմ սիրու... Այն ժամանակ նակ իմ կար էարձած նորի կամ քար պարագանքի շնորհով սիրաը անզգալ մէջ թողարձած մարդուն և ամեն զգացմունք մեռցնելուց յետոյ, մարդուն երկու տարի շարունակ անյախութեան մէջ թողնելուց յետոյ՝ նորից ուգենալ հրաշքի պէս ծնեցնել սիրոյ վառ զգացմունքը քարացած

և նոյն իսկ քո վարմունքի շնորհավ ցամաքած մի սրտի մէջ...

Ես պատրաստ էի երեխայի պէս լաց լինել՝ ա-նարգված ինքնասիրութեան զգացմունքից...

Նամակի տակ կար, յամենայն դէսու, և հաս-ցէն, որով կարելի էր ուզզել և պատսսխանը:

Ես, ի հարկէ, չը գրեցի այն բոլորը, ինչ որ մտածեցի, այլ վերցնելով թուղթ և գրիչ, միայն այսքան գրեցի.

„Յարգելի օրիորդ. Ընդունեցէք իմ ջերմ շնոր-հակալութիւնս ձեր շնորհաւորութեան համար: Սյո՛, այդ երկու տարվայ ընթացքում ես շատ աշ-խատեցի, սաստիկ սարապեցի, քանի որ մտաւոր կեանքով ասլրելը դարձել էր ինձ համար կեսնքի միակ մխիթարութիւն: Ուրիշ որ և է զգացմունք այժմ այլ ևս մատչելի չէ իմ սրտին. սիրսա իսպա-ցամաքել, մեռել է այդ ժամանակամիջոցում. ես հրաժարվեցի իմ առաջվալ ապարդիւն ցնորքներից. ես հիմա լաւ համոզվեցալ, որ ոչ մի կին չէ կա-րող ինձ սիրել անսահման և յարատե կերպով... Եւ ցամաքած սրտիս մէջ ամփոփված սիրոյ վերջին բեկորները ես ալտուհետեւ, մինչև մահս, սիշտք է նուիրեմ ոչ թէ կնոջ զգացմունքին փոխադարձը տալուն, այլ միմիշայն իմ ազգի քաղաքակրթական գործի առաջադիմութեան ծառալելուն”:

Եւ նոյն օրը ես այդ նամակն ուզարկեցի:

Սակայն ըօպէական վրդովմունքից լետով, ես

փոշմանվեցալ... Ինձ թվում էր թէ չափից գուրս կոշտ էի գրել նամակս: Ես սրտով ցանկանում էի մի պատսսխան ստանալ... Երանի թէ նա „մեղալ“ գար, մտածում էի ես, ներողութիւն խնդրէր, եր ցաւն ու զղումն արտայալուէր իր առաջվալ վար-մունքի համար...

Ես, այնու ամենախիւ, գարձեալ մի աւելորդ երկու շաբաթ սպասեցի Հելլերգում, միշտ լու-սալով, որ գուցէ Եվէլինալից երկրորդ նամակ կու-նենամ...

Յոյսերա զուր անցան... Հաղիւ բժշկված և նորից վիրաւորված սիրս, բորբոքված ուզեղս հրաժարվում էին խիստ և ճիշդ քննութեան տակ զցել իմ սեփական վարմունքի շարժառիթները:

Արդեօք վիրաւորված ինքնասիրութիւն, ա-նարգված պատուասիրութիւն, թէ վրէժինդրու-թիւն էր իմ արածը...

Ես գարսել, պատրաստել էի արդէն իմ բոլոր ամենաանհրաժեշտ իրեղեններն ու գրքերը, մը-նում էր միայն ուսանողական գրասեղանիս վրա մնացած մի քանի թղթերն ու նամակները ջոկել, անպէտքները ոչնչացնել, հարկաւորները ճանա-պարհորդական արկղիս մէջ դնել... Թղթեր ջոկե-լու միջոցին աչքիս ընկաւ գրասեղանիս պահարա-նում դրված մի հաստ, կնքված ծրաբ: Ես պատու-ցի ծրաբի երեսը. նրա մէջ պարունակված էին

Եվելինալի բոլոր նամակներն ու նրա լուսանկար պատկերը...

Ես անմիջապէս վառեցի սենեակիս մէջ եղած փոքրիկ երկաթեալ վառարանը և առանց նորից նայելու անգամ այդ նամակների վրա, ամբողջ կապոցն այրեցի: Մի բօպէ ես տատանվեցի, մտածմունքներս խառնվում էին... Արդեօք այրեմ և նրա լուսանկարը...

Ես վերցրի պատկերը և առաջին անգամ երկու տարուց լետոյ ուշադրութեամբ սկսեցի քննել մի ժամանակ ինձ համար թանգագին եղած այդ անուշ զծագրութիւնները:

Ոչ, ես չեմ այրի, երբէք չեմ ոչնչացնի այդ պատկերը, վճռեցի ես: Ես կը պահեմ այդ լուսանկար կենդանագիրը մինչև կեանքիս վերջը. թող այդ դէմքը լիշեցնէ ինձ այն սէրը, որը լեզափոխեց իմ ամբողջ էռթիւնս... Ես նրան կը պահեմ որպէս այն Եվելինալի կենդանագիրը, որը ինձ սիրում էր, և ոչ թէ այն Եվելինալի, որը լետ մղեց իմ սէրը...

Ճանապարհ ընկնելու օրը հասել էր. հասել էր և իմ թանգագին ընկերներիցս բաժանվելու րօպէն: Սրտաշարժ էր նա, այդ բաժանվելու րոպէն...

Ընկերներիս խումբը ուղեկցեց ինձ մինչև երկութուղարին կայարանը:

Լովեց երրորդ զանգակը, լոկոմոտիվի սուլոցը, և գնացքը շարժվեց...

Մնաս բարե դու անմոռանալի Հելլիէրգ, մնաս բարե դու քաղաքակիրթ Եւրօպա: Զեզանից մտաւոր սնունդ, ուսում, կրթութիւն, հոգեկան ազնիւյուզունքներ, գէպի բարձր գաղափարներ անլաղթելի ձգտում, էր ազգին պիտանի լինելու վառանկութիւն, վերջապէս նոր կեանք ստացած՝ արևելցու վերջին հրաժեշտի ջերմ համբոյն ընդունեցէք...

Այսուհետև ես պէտք է տպրեմ իմ անցեալի լիշատակներով, նրանից ինձ համար ոլժ և զօրութիւն քաղեմ ն ե ր կ ա լ ի ի մէջ պարտաճանաչ լինելու համար, իսկ ներկայ կեանքի ծանր, անխոնչ, խղճմտաւոր մաքառումն՝ ինձ թէ ոլժ և թէ լոլս պիտի տայ աւելի սլածառ տպագալին սպասելու...

---

Վերջապէս ես Կ. Պօլսումն եմ, իմ ծննդավայրում: Ես այլ ես հասարակ թղթակից կամ աշխատակից չեմ հայոց լրագիրների, այլ ինքս խմբագիր եմ մի հայոց ամենօրեալ թերթի: Ծնողներիս մօտ սկզբից ապրելուց լետոյ, ես այժմ վարձել եմ ինձ համար մի առանձին ընակարան, որտեղ և զետեղել եմ խմբագրութիւնս: Սրտիս անցեալ վէրքերը կատարելապէս բուժվել են, ես զգում եմ մի առանձին հոգեկան բաւականութիւն և անդորրութիւն... Գուցէ այդ դրանիցն է, որ մարդ զգում է թէ իր

կարողութեան և ընդունակութիւնների չափ կատարում է իր պարտքը...  
Բնակարանս, որը գտնվում է Կ. Պօլսի ամենալաւ փողոցներից մինի վրա, Բերայում, թէ կոքը կամեստ է, բայց կօկիկ և յարմար է ամեն կողմից։ Լրագիրս լու է գնում։ յօդուածներս, իրանց մտքի նորութեամբ, ուշադրութիւն են գարձնում իրանց վրա, շատ անգամ նոյն խոկ ազմուկ և վեճ են յարուցանում։ Ես ունեմ շատ բարեկամներ և, ի հարկէ, աւելի էլ բազմաթիւ թշնամիներ...  
Պատրիան օրէնք է։

Թա բնական օրէսք է:  
Օրերը աննկատելի են անցնում տեսդալին պա-  
րապմունքի մէջ: Անընդհատ երթևեկութիւնը խրմ-  
բագրութեանս մէջ թէև յոդնեցնում է ինձ, բայց  
մտքերի ոգեսորութիւնը, անխոնջ գործունէութեան  
տուած պառողները՝ վարձատրում են ինձ այդ յոդ-  
նածութիւնից. սակայն օրվայ ամենաերջանիկ ժա-  
մերը լինում են իմ գիշերները, երբ գործը  
վերջանում է, այցելուների երթևեկութիւնը գա-  
դարում է, խմբագրութիւս փակվում է և ես մե-  
նակ իմ կաքինետումս, զբասեղանիս մօտ, վառած  
ճրագների առջև նստած, ոգեսորվում եմ ուղեղիս  
մէջ ծնվող մտքերով ու մտապատկերներով և զբում  
եմ յօդուածներ միւս օրվայ համար: Եւ երբ մի մի  
անգամ ուղեղս կարծես րօպէապէս դադարում է  
մտածելուց, մտքերը դժուարութեամբ են ձևա-  
կերպվում, զաղափարները իմ ուզած արագութեամբ

առջեւս դրված թղթի վրա մարմին և հոգի չեն  
դառնում, եթի որտիս ոգեսրութիւնը դանդաղում  
է ցանկալի տպաւորութիւն գործող դրական պար-  
բերութեան մէջ ձուլվելու, —այն ժամանակ հա-  
յեացքս ակամալ ընկնում է գրասեղանիս դիմացի  
պատի վրա կախված մի կնոջ պատկերի վրա. դա  
էվելինալի պատկերն է, այն էվելինալի, որին ես  
Ցիրիխիսումն էի ճանաչում և ոչ թէ վերջին ամիս-  
ները Նիցցալում, այն էվելինալի, որն իմ ամբողջ  
կեանքի համար իր սիրոյ զգացմունքի դիմական  
զօրութեամբ ինձ զարկ տուեց գործելու, որքան  
ոլժերս ներում են, պիտանի լինելու՝ համամարդ-  
կային մտքերը դեռ ևս խաւար հայրենիքումս տա-  
րածելու... Եւ այդ սիրելի դէմքի զծագրութիւն-  
ների վրա նայելով, ես կըկին ներշնչվում եմ նոր  
եռանդով, ժամանակաւորապէս թմրած ուղեղս  
կարծես մի գերբնական զօրութեամբ արթնանում,  
պարզվում է, —ե ես նորից կարողանում եմ պարզ,  
որոշ և անկեղծ կերպով ձեակերպել մտքերս, որոնք  
նորից ջրի տառա հոսանքի պէս սկսում են ըլխել  
հրապարակագրողի դէպի մարդկութիւնն ունեցած  
անսահման և ոգեսրված սիրոյ զգացմունքից...  
այս առաջնական պատկերից հայեաց-

Մի մի անգամ Եվելինալի պատկերը գույքը ակածաւ ակածաւ անցնում է նրա կողքին կախված և քըս ակածաւ անցնում է նրա կողքին կախված և մի այլ պատկերի վրա: Դա գեղեցիկ, խելացի, բարեսիրժ, դէմքի փոքր ինչ հեգնական արտախայտութիւն ունեցող տղան արդու պատկեր է: Դա իմ վա-

զեմի բարեկամ Խւմասօվի պատկերն է... Այն ժամանակ ես նրան դիմում եմ հետևեալ Հարցմունքներով.

Միթէ ճշմարիտ ես տոնել, անգին բարեկամ, որ սէրը, նոյն խոկ կորցրած սէրը, մի պատուանդան է հասարակաց գործիչի համար, միթէ կարող է պատահել որ մարդը կեանքի մէջ մի քանի անգամ սիրէր, և սիրէր անկեղծ, անսահման կերպով, իր հոգու ամբողջ զօրութեամբ, իր սրտի ամբողջ ոլժով, իր զշացմունքների խորքերից, իր ամբողջ էռութեամբ... Միթէ ճշմարիտ է, որ հասարակաց գործիչը սիրելով ու տանջվելով, այդ սիրոյ ու հոգութիւնը սիրելով ու տանջվելով, այդ սիրոյ ու հոգութիւնը սիրելով ու տանջվելով, մէջ եփվելով, կը ստեղծէ իր համար միշտ նոր և նոր պատուանդաններ, որոնց իրար վրա շարելով և նրանց վրա բարձրանալով, նա տնընդհատաբար կը քաղէ տնօսպառելի ոլժեր իր հոգեկան մաքուր յուզմունքներից, աւելի և աւելի գարբնելով իր սիրով և ամբապնդելով իր զօրութիւնը՝ այդպիսապ հետզհետէ աւելի և աւելի զառնակործութեան կը գառնայ բարձրանալու և ձգտելու ընդունակ կը գառնայ բարձրանալու և ձգտելու զէսլի ստեղծագործութեան կատարելութիւնը...»

Եւ միթէ կարող է պատահել, որ եվէլինացի պատկերի տեղ, իմ գրասեղանիս առջև, մի ժամանակ կախված կը լինի մի այլ կնոջ պատկեր...



ՀՀ Ազգային գրադարան



NL0249490

